



ԳԼՈՒԲՈՒՄ

*ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ*

4 (14)

ԵՐԵՎԱՆ

2010

ԳԼՈՒԲՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4 (14), 2010

«ԳԼՈՒԲՈՒՄ» ՏԵՂԵԿԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գագիկ Հարությունյան (համակարգող) - «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն;
Կարեն Վ. Կարապետյան - «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վարչության նախագահ,
գլխավոր տնօրեն; Մուշեղ Լալայան - ՀՀԿ փոխնախագահ; Սևակ Սարուխանյան -
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Աննա Ժամակոչյան
(գլխավոր խմբագրի տեղակալ)
Դիանա Գալստյան
(էջադրող-ձևավորող)
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Հարությունյան

ԼՂՀ և տարածաշրջանային խնդիրների շուրջ 3

Արա Մարջանյան

Մենք և Թուրքիան. լրջանալու պահը..... 9

Արեստակես Միմավորյան

Գաղափարախոսական հոսանքները
Թուրքիայի արտաքին քաղաքականության
համատեքստում19

Հայկարամ Նահապետյան

Միացյալ Նահանգների վերլուծական
կառույցներում թուրք-ադրբեջանական
ակտիվացման հիմնախնդրի շուրջ 30

Տիգրան Ղանալանյան

ԱՄՆ և Կանադայի հայ
բողոքական համայնքները 34

Վահրամ Հովյան

Միբիայի հայ ավետարանական համայնքը 41

Մամվել Մարտիրոսյան

Կիբերգործեր. ժամանակով թելադրված
անհրաժեշտություն 52

Նորություններ

Տեղեկատվական ոլորտի նորություններ 57

Նորություններ Թուրքիայից 62

ԼՂՀ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

*Գազիկ Հարությունյան**

Ինչպես հայտնի է, Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների՝ հունիսի 17-ին Ս.Պետերբուրգում տեղի ունեցած հանդիպումից անմիջապես հետո Ի.Ալիևը լքեց Պետերբուրգը, իսկ հունիսի 18-ին ԼՂՀ-ում, ադրբեջանական դիվերսիոն խմբի գործողությունների արդյունքում հայկական կողմը կորուստներ ունեցավ: Պակաս հայտնի է, որ այդ միջադեպին հետևեցին մեր զինված ուժերի համարժեք քայլերը: Բոլոր պարագաներում այդ իրադարձությունները սուր ընկալվեցին մեր հանրությունում և ակտուալացրին զանազան ռազմական սցենարների քննարկումները: Ի լրումն՝ հետևեցին տարաբնույթ տեղեկատվական հոսքեր. մեծ տերությունների համաձայնությամբ ԼՂՀ-ում տեղի է ունենալու «պայմանավորված» պատերազմ, և կողմերին տարանջատելու են ռուսական, թուրքական ու ամերիկյան (կամ՝ ՆԱՏՕ) խաղաղապահ ուժերը, իսրայելական և ամերիկյան ռմբակոծիչները Վրաստանից (!!) տեղափոխվել են Ադրբեջան և պատրաստվում են հարված հասցնել Իրանին, իսկ վերջինս, ի պատասխան, զորքեր է կուտակում իրանա-ադրբեջանական սահմանում: Անգամ ԱՄՆ-ում «ռուսական լրտեսների» վերաբերյալ սկանդալի՝ ՋԼՄ-ում հայտնվելու պահը որոշ օտարերկրյա վերլուծաբաններ մեկնաբանեցին որպես միջազգային հանրության ուշադրությունը «իրանական» պատերազմից շեղելու փորձ:

Նման լրատվական հաղորդագրումների ճնշող մասը, ինչպես քաջ հայտնի է մասնագիտական շրջանակներին, ակնհայտ ապատեղեկատվություն է: Սակայն հաշվի առնելով այդ լայնածավալ տեղեկատվական գործողությունների աղբյուրները և, ինքնին, նման ապատեղեկատվության երևան գալու փաստը և ժամանակը, պետք է արձանագրել, որ տարածաշրջանի հանդեպ փոքր-ինչ անառողջ հետաքրքրությունը զգալի աճել է, և դա պայմանավորված չէ միայն ԼՂՀ խնդրով: Նման գործընթացը վկայում է, որ տարածաշրջանում տեղի են ունենում հերթական որակական փոփոխություններն ու վերադասավորումները: Դրանց բովանդակությունը և ուղղվածությունն համարժեք ընկալելու նպատակով փորձենք համառոտ բնութագրել նախկին փուլերը:

* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

Բանակցային գործընթացի փուլերը

ԼՂՀ միջազգային ճանաչման շուրջ բանակցությունները ԵԱՀԿ Մինսկի խմբի, ինչպես նաև այլ ձևաչափերով ընթանում են 90-ականների սկզբից, և այդ ժամանակահատվածում ռազմաքաղաքական տրամաբանությունը տարածաշրջանում, զլոբալ աշխարհաքաղաքական տեղաշարժերի ազդեցության հետևանքով, զգալի փոփոխություններ է կրել:

Հայ-ադրբեջանական ռազմական հակամարտության առաջին փուլում միջնորդական առաքելությունը հիմնականում կատարում էին Ռուսաստանը և մասամբ Իրանը, որն ավարտվեց 1994թ. մայիսին Բիշքեկի հրադադարի մասին համաձայնագրով: Կարելի է ասել, որ այդ փուլում որոշիչ էր հետխորհրդային տարածքում ՌԴ կարևոր, սակայն աստիճանաբար նվազող դերակատարումը:

Հաջորդ փուլում միջնորդական նախաձեռնությունը պատկանում էր Մինսկի խմբին, սակայն այդ ձևաչափում առավել ակտիվ էին ամերիկյան և ֆրանսիական կողմերը: ՀՀ և ԱՀ նախագահների հանդիպումներն ընթանում էին Եվրոպայում և Միացյալ Նահանգներում (առավել հիշարժան է 2001թ. քիուեսթյան հանդիպումը): Չնայած մեծ տերությունների ավանդական ճնշումներին և Մինսկի խմբի համանախագահների նույնքան ավանդական դարձած լավատեսական կանխատեսումներին և հայտարարություններին, այդ փուլի գլխավոր հետևանքն է հակամարտող կողմերի դիրքորոշումների հստակեցումը, ինչը նույնպես, բանակցային գործընթացի համատեքստում, բավական լուրջ արդյունք է: Հատկանշական է, որ այդ փուլը հիմնականում ենթարկվում էր միաբնեռ աշխարհակարգի կայացման և հետագա հաստատման, ԱՄՆ - ՌԴ Մառը պատերազմի վերսկսման (վերջինիս համատեքստում բնորոշ է, որ 2003 թվականից դարաբաղյան խնդրում նկատվում է ամերիկյան ակտիվության որոշակի նվազում) տրամաբանությամբ:

Ընթացիկ փուլի սկիզբը պայմանականորեն կարելի է համարել 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի շուրջ տեղի ունեցած վրաց-ռուսական պատերազմը: Վերջինս բազմաբնեռ համակարգի ձևավորումով պայմանավորված աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետևանքն է: Դրանց արդյունքում նվազել է ԱՄՆ դերակատարումը մեր տարածաշրջանում, և զգալի աճել է ռուսական գործոնը: Կարելի է փաստել, որ այսօր Ռուսաստանը Մինսկի խմբի համանախագահների շրջանակում, համաձայն դասական ձևակերպման, «ավելի հավասարի» կարգավիճակ է ձեռք բերել, և մտադիր է էլ ավելի ամրապնդել դիրքերը Հարավային Կովկասում, որտեղ Հայաստանը հիմնական հետևակետն է և միակ տարածքը, ուր կանգնած է ռուսաստանյան զինուժը: Այդ տեսանկյունից պատահական չէ, որ ՀՀ և ԱՀ նախագահների հանդիպումները վերջին շրջանում ընթանում են Ռուսաստանի հովանավորության ներքո, և պետերբուրգյան վերջին հանդիպումը (երկարատև ընդմիջումից հետո) դրա

վկայությունն է: Ի դեպ, հնարավոր է նաև, որ Ալիևի պետերբուրգյան համա-
ժողովից ցուցադրական հեռանալը պայմանավորված էր ոչ այնքան ՀՀ նախա-
գահի հայտնի դիրքորոշումներով, որքան ՌԴ նախագահի կողմից կատարված
նոր առաջարկներով: Նկատենք նաև, որ նշմարվում է ՀՀ և ԱՀ նախագահների
հնարավոր հանդիպում Ալմաթիում, ինչը վկայում է այն մասին, որ բանակցա-
յին գործընթացը, թերևս, շարունակվում է, և որ Ալիևի դեմարշը պետք է ընդու-
նել ընդամենը որպես դիվանագիտական հնարք, բայց ոչ սկզբունքային դիրքո-
րոշում կամ վերջնագիր: Միևնույն ժամանակ, պետք է փաստել, որ տարածա-
շրջանում ակտիվացել է ոչ միայն Ռուսաստանը:

Տարածաշրջանային այլ դերակատարներ

Եթե Իրանի տարածաշրջանային քաղաքականությանը բնորոշ են հետևողա-
կանությունը և կայունությունը, ապա նույնը չի կարելի ասել Թուրքիայի մա-
սին, որը ցուցաբերում է դիվանագիտական ու տեղեկատվական ակտիվու-
թյուն: Հատկանշական է, որ ամերիկյան գերակայության տարիներին այդ եր-
կիրը հստակ էր կատարում ԱՄՆ-ի հանդեպ իր «պարտականությունները»,
սակայն բազմաբևեռության ձևավորումը զգալիորեն բարձրացրեց Թուրքիայի
«ինքնավարության» մակարդակը, և Անկարան կտրուկ քայլեր կատարելով
սկսեց փնտրել իր տեղը նոր համակարգում: Առայժմ տպավորությունն այնպի-
սին է, որ թուրքերն այնքան էլ արդյունավետ չեն գործում նոր պայմաններում:
Երկրում ձևավորվել է նեոսամանիզմից, նեոպանթուրքիզմից և եվրասիակա-
նությունից բաղկացած ագրեսիվ գաղափարախոսական սիմբիոզ¹, որը դրդում
է Անկարային՝ կատարել երբեմն ոչ այնքան մտածված քայլեր: Դրանց արտա-
հայտություններից են և՛ հայ-թուրքական բանակցությունների փաստացի տա-
պալումը, և՛ իր նախկին դաշնակից Իսրայելի դեմ կատարած սադրանքները²:
Նշենք, որ հակաիսրայելական գործողությունները, չնայած որոշ երկրների
կողմից դրանք դատապարտող պաշտոնական հայտարարություններին, բնավ
միանշանակ չընկալվեցին արևմտյան հանրությունում: Մակայն ԱՄՆ-ին, որը
կարևորում է Թուրքիայի (ինչպես և Ադրբեջանի) տրանսպորտային-հա-
ղորդակցական դերակատարումը Աֆղանստանի պատերազմում, խիստ ան-

¹ Տե՛ս *Ա. Միմալոբյանի* «Գաղափարախոսական հոսանքները Թուրքիայի արտաքին քաղաքա-
կանության համատեքստում» հոդվածն ամսագրի այս համարում:

² «Խաղաղության նավատորմի» հետ կապված թուրք-իսրայելական հայտնի միջադեպը որոշ
վերլուծաբաններ մեկնաբանում են «կոնսպիրոլոգիական» տեսանկյունից, պնդելով, որ այն եր-
կու երկրների ղեկավարությունների կողմից մշակված գործողություն էր՝ ուղղված Թուրքիային
իսլամական աշխարհի առաջատարի հաստատմանը: Մակայն դա մակերեսային մոտեցում է
(որոշ լրատվամիջոցներում հաճախ կարելի է հանդիպել «ամեն ինչ պայմանավորված է»
պնդումներին): Իսրայել-Թուրքիա հակասությունները վաղեմի և օբյեկտիվ, կարելի է ասել՝ աշ-
խարհայացքային բնույթ են կրում:

հանգստացնում են ոչ միայն Իսրայելի հետ Թուրքիայի վատթարացող հարաբերությունները, այլև այդ երկրի դիրքորոշումը քրդական խնդրում և Իրանի³, ինչպես նաև արաբական որոշ երկրների հետ համագործակցություն զարգացնելու փորձերը:

Թուրքական ակտիվությունն անտարբեր չի ընկալում նաև Ռուսաստանը: Եթե ԱՄՆ-Թուրքիա հակասությունների առկայությունն աշխարհաքաղաքական առումով նպաստավոր է Մոսկվայի համար, վերջինիս, սակայն, չի կարող հրապուրել Թուրքիայի և «փոքր եղբայր» Ադրբեջանի համաձայնեցված գործունեությունն Անդրկովկասում, որը ռուսաստանյան ստրատեգներն ավանդաբար համարում են «իրենցը»: Պետք է հաշվի առնել նաև, որ չնայած Ռուսաստանը Թուրքիայի և Ադրբեջանի հետ էներգետիկ համաձայնություններ է կնքում և զարգացնում առևտրական հարաբերություններ, բայց աշխարհաքաղաքականությունը մշտապես գերակայում է տնտեսական կատեգորիաների հանդեպ:

Հատկանշական է նաև, որ ադրբեջանական ագրեսիվությունը, ինչպես և թուրքականը, նույնպես գաղափարախոսության ածանցյալ է: Հայտնի է, որ Ադրբեջանը և ադրբեջանցիները, որպես պետություն և ժողովուրդ, բավական նոր կազմավորում են ու, որպես այդպիսին, կարիք ունեն ազգ ձևավորող գաղափարախոսության: Այսօր որպես գաղափարախոսության հիմնադրույթ նրանք ընդունել են ոչ թե քաղաքակրթական պատկերացումներ և արժեքներ, այլ (գուցե վերջիններիս բացակայության պատճառով) ծայրահեղ հակահայկականությունը: Ադրբեջանն Ալիևի վարչախմբի տոտալիտար մեթոդներով վարած քարոզչության արդյունքում դարձել է խիստ ռազմատենչ և անհանդուրժողական բնակչություն ունեցող մի տարածք: Մա ադրբեջանցիներին տանում է դեպի ծուղակ, այսինքն՝ նրանք իրենց իսկ հորինած գաղափարական դրույթներից արդեն դժվարանում են դուրս գալ, որովհետև հակահայկականությունը դարձել է պաշտոնական դոկտրին, աշխարհընկալում և քաղաքականություն:

Հետևություններ

Հրադադարի համաձայնագրի ստորագրումից անցել է շուրջ 16 տարի, ԼՂՀ –ում առայսօր պահպանվում է *status quo-ն*, և որոշ տեսանկյունից այդ փաստն ինքնին կարելի է համարել որոշակի ձեռքբերում: Միննույն ժամանակ, ներկայիս փուլը պարունակում է որոշակի ռիսկեր, որոնցից նշենք.

³ Այս առիթով նկատենք, որ առայժմ տպավորությունն այնպիսին է, որ եթե պաշտոնական Թեհրանն այդ համագործակցությունը դիտարկում է որպես մարտավարական դրվագ, ապա Անկարան, էլնելով վերը նշված ծավալապաշտական գաղափարախոսական դրույթներից, դա ընկալում է որպես հեռահար նպատակներ հետապնդող ռազմավարություն:

- ԱՄՆ հարաբերական նահանջը տարածաշրջանից և այդ իսկ պատճառով քաղաքական «կարգավորվածության» ընդհանուր մակարդակի նվազումը,
- Թուրքիայում ազգայնամոլական գաղափարախոսական միջավայրի ձևավորումը և այդ երկրի կողմից քաղաքական «ինքնավարության» ձեռքբերումը, ինչը մասնավորապես արտահայտվում է Հարավային Կովկասի նկատմամբ հավակնությունների արտահայտումով,
- Ադրբեջանում ագրեսիվ հակահայկական գաղափարախոսական դաշտի կայացումը և Թուրքիայի հետ ռազմավարական համագործակցության զարգացումը:

Դրական գործոնների շարքում կարելի է առանձնացնել հետևյալ կետերը.

- ԼՂՀ՝ որպես պետության, կայացումը և, մասնավորապես, այդ իրողության ամրապնդումը միջազգային հանրության գիտակցությունում,
- հայկական քաղաքական ընտրանու կողմից դիվանագիտական փորձառության ձեռքբերումը,
- Ռուսաստանի աշխարհաքաղաքական վերականգնումը և այդ տերության քաղաքական դեկավարության ձգտումը՝ լինել տարածաշրջանի գլխավոր «կարգավորիչը» (առանց Թուրքիայի),
- Թուրքիայի և ԱՄՆ-ի, Իսրայելի, ինչպես նաև որոշ եվրոպական երկրների (հատկապես՝ Գերմանիայի) միջև ռազմաքաղաքական ու աշխարհայացքային հակասությունների առաջացումը և արևմտյան հանրությունում թուրքական գործոնի վերաբերյալ բացասական պատկերացումների ձևավորումը:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ ԼՂՀ խնդրի՝ մեր պատկերացումներին համաձայն լուծումը գլխավորապես կախված է համահայկական հանրության պատրաստվածության մակարդակից: Պետք է հաշվի առնել, որ քաղաքական իրադրությունը տարածաշրջանում որոշակի փուլում կարող է որակապես փոխվել: Այսպես կոչված «ինքնակազմակերպվող կրիտիկականության բնութագրիչների» վերաբերյալ քաղաքագիտական պատկերացումների⁴ համաձայն, ռազմաքաղաքական համակարգն էվոլյուցիոն եղանակով կարող

⁴Նկատենք, որ ներկայացված հայեցակարգը, որն իր դատողություններում կիրառում է ԼՂՀ խնդրին քաջատեղյակ ամերիկյան դիվանագետ Սթիվեն Մաննը (*Steven R. Mann. The Reaction to Chaos // Complexity, Global Politics, and National Security. Edited by David S. Alberts and Thomas J. Czerwinski. National Defense University Washington, D.C. 1998*), փոխառված է բնական գիտություններից, մասնավորապես Նոբելյան մրցանակակիր Ն.Ն. Սեմյոնովի *ճյուղավորված շղթայական ռեակցիաների* տեսությունից:

Է զարգանալ մինչև որոշակի «կրիտիկական վիճակի», որում արդեն աննշան իրադարձությունները կարող են հարուցել բուռն շղթայական ճյուղավորված ռեակցիա, որի արդյունքում որակապես փոխվում է ողջ համակարգը: Նախկինում նման կրիտիկական իրավիճակ ստեղծվեց ԽՍՀՄ և երկբևեռ աշխարհակարգի փլուզման արդյունքում: Ներկայումս ընթանում է բազմաբևեռ համակարգի ձևավորման բավական հիվանդոտ գործընթաց, որի ընթացքում նույնպես հնարավոր է հասնել որոշակի «կրիտիկական վիճակի», որից հետո զարգացումները կընդունեն բուռն կամ, այլ խոսքերով՝ ոչգծային բնույթ: Նման իրավիճակին պատրաստ լինելու համար ՀՀ-ն և ԼՂՀ-ն պետք է լուծեն բազմաթիվ հրատապ խնդիրներ, որոնցից նշենք.

- Համահայկական զարգացման իրատեսական ռազմավարության մշակումը և իրականացումը, քանի որ հանրության ընդհանրական զարգացման մակարդակն է, որ որոշիչ է լինելու ապագայի հնարավոր հակամարտություններում,
- Հայաստանյան (պետական) և մեր ազգային շահերին ուղղված բաղադրիչի ձևավորումը ԱՄՆ-ում հայկական կազմակերպությունների կողմից իրագործվող լոբբինգում, այդ ոլորտում գործունեության ծավալումը Եվրոպայում և Ռուսաստանում:

Վերոնշյալ ռազմավարական ծրագրերին զուգահեռ՝ անհրաժեշտ է իրագործել, մասնավորապես, հետևյալ մարտավարական գործողությունները.

- Ապահովել ԼՂՀ-ի շուրջ բանակցային գործընթացի շարունակականությունը (իրագործել Թալեյրանի սկզբունքը՝ «միշտ պետք է բանակցել, բանակցել և բանակցել...»):
- Միջազգային քաղաքական հանրությունում տարանջատել ՀՀ-Իրան կենսական նշանակություն ունեցող և առայժմ այլընտրանք չունեցող հարաբերությունները գլոբալ հարթությունում ներկայում տեղ գտած հակաիրանական միտումներից:

ՄԵՆՔ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ. ԼՐՁԱՆԱԼՈՒ ՊԱՀՐ

*Արա Մարգանյան**

Ապրիլը ծանր ամիս է հայերի համար: Այն հեշտ ամիս չէ նաև Թուրքիայում, և նույնիսկ ԱՄՆ-ում որոշակի խնդիրներ է առաջացնում այս երկրի նախագահների աշխատակազմերի և Պետդեպարտամենտի աշխատակիցների մեջ. «Եթե ուզում եք իմանալ, երկրի (իմա՝ Միացյալ Նահանգների - ԱՄՆ) բնակիչները եղեռնը շատ տհաճ բան են համարում: Նրանք չեն սիրում առավոտյան լրագրերում դրա կամ դրա նման մի բանի մասին կարդալ: Մարդն իրեն լավ չի զգում, երբ առավոտյան սուրճն ընպելիս եղեռնի մասին է կարդում: Այդպիսի լուրը կարող է մարդու ամբողջ օրը փչացնել: Երեք-չորս եղեռն, և մարդ կարող է այնքան զայրանալ, որ, մեկ էլ տեսար, ընտրություններին իր ձայնը տա այլ թեկնածուի», հեռավոր 1965-ին դառը հեզնանքով գրում էր XX դարի հանճարեղ ֆանտաստներից մեկը՝ Ռոբերտ Շեքլին իր «Մի քիչ չխոսե՛նք» սքանչելի պատմվածքում¹:

Եվ ընդհանրապես, մեր ժամանակները դյուրին չեն (եթե երբևէ եղել են այդպիսին): Իրոք, աշխարհը, գոբալ մասշտաբի բազմաթիվ խնդիրների բեռի տակ կքաճ, դառնում է ավելի խրթին ու անկայուն: Ապագա զարգացումները մշուշոտ են, լի վտանգներով: Գոյանում են աշխարհաքաղաքական նոր ուժային կենտրոններ, սրվում են ազգային միջպետական հարաբերությունները, տարածաշրջանային հակասությունները: Մաստկանում է մրցակցությունը բնական ռեսուրսների համար: Մամուլի էջերը, կինո- և հեռուստաէկրանները, անգամ ակադեմիական հրապարակումները ողողված են մարդկությանը սպասող տարատեսակ *Արմազեղոնների* պատկերումներով, ապագայի հոռետեսական սցենարների մանրակրկիտ նկարագրումով: Գրեթե ամեն ամիս հայտնվում են «Աշխարհն առանց Արևմուտքի» կամ «Աշխարհն առանց ԱՄՆ-ի», «Աշխարհն՝ անդունդի եզրին» թեմաներով նոր գրքեր և հոդվածներ²: Իսկ նորօրյա մարգարեները չեն զլանում գրեթե ամեն օր ավետել նոր աշխարհակարգի գալուստը:

Ի՞նչ է նշանակում այս բոլորը: Ի՞նչ է նշանակում մեզ համար՝ պրակտիկ հարթությունում:

* Համաշխարհային բանկի վերականգնվող էներգետիկայի ծրագրի համակարգող, տեխնիկական գիտությունների թեկնածու:

¹ R. Shekley, Shall We Have a Little Talk? *Galaxy*, 1965.

² A. Марджанян, Наше будущее – глазами NIC. «21-й Век» (русскоязычное издание), No 3 (11), 2009г. С. 3-38.

Պրագմատիկ տեսանկյունից այս ամենի հիմքում ընկած է երկբևեռ («Սոցաշխարհ - Արևմուտք») և միաբևեռ («ԱՄՆ հեգեմոնիա») աշխարհակարգերի ավարտի իրողությունը: Սակայն այստեղ ավելի կարևոր է այն, որ 2008թ. նոյեմբերից հետո ԱՄՆ քաղաքական ու հասարակական մտքի հսկա ճոճանակը *մեսիականությունից* թեքվում է դեպի մեկուսացում (*իզոլյացիոնիզմ*)՝ աշխարհի քաղաքական պատմության մեջ ազդարարելով նոր փուլի բացումը: Ջուր չէ, որ միջազգային հարաբերությունների գործում որոշ բազմափորձ վետերաններ այս առումով նախանշում են XIX կամ նույնիսկ XVIII դարերի «եվրոպական նվազախմբի» վերադարձը: Կարելի է պնդել, որ «նոր աշխարհակարգի գալստյան» բոլոր խոսակցությունների հետևում ընկած է հետևյալ իրողությունը. *Մեսիական Ամերիկան լքում է աշխարհը*, այդ թվում և Կովկասը: Միգուցե լքում է մեր ողջ տարածաշրջանը, իր իսկ սիրելի գավակ «Մեծ Միջին Արևելքը»: Լքում է՝ տեղը թողնելով ավելի պրագմատիկ ԱՄՆ-ին: ԱՄՆ-ին, որն այլևս որդեգրելու է աշխարհաքաղաքական տարբեր շահերի հավասարակշռման, այսպես կոչված՝ իրատեսական, *ռեալիստական* ու պրագմատիկ հաշվարկի քաղաքականությունը՝ *Ռեալիտիթիկը*:

Հասկանալի է, որ ԱՄՆ այս «գաղափարական նահանջը» տեղի չի ունենա մեկ օրում կամ մեկ տարում: Այն կարող է լինել տևական, *“smart force”*³ այս կամ այն կիրառման հետ կապված բազմաթիվ ելևէջներով: Մեզ համար այս ելևէջների արտահայտման վառ օրինակը հանդիսացավ, մի կողմից, հայթորքական մերձեցման հարցում ԱՄՆ քաղաքական օժանդակումը Հայաստանին, մյուս կողմից՝ ԱՄՆ նախագահի շուրթերից «գ-բառի» արտաբերումից «խնամքով խուսափումը», ճիշտ ինչպես դա խորհուրդ էր տրվում ԱՄՆ հեղինակավոր *ՌԵՆԴ* կորպորացիայի վերջին աշխատությունում⁴: *“The G-word”*-ը, *Genocide* (գենոցիդ, եղեռն) բառի *էվֆեմիզմ* է՝ օգտագործված այս տարի ապրիլին՝ Սպիտակ տան մամլո խոսնակի կողմից: Այն միանգամից կրկնվեց ԱՄՆ և միջազգային մամուլի շատ էջերում: Գիտակցում են արդյոք այս *էվֆեմիզմի* հեղինակները, թե ինչ ահավոր, վիրավորական, անբարո հնարք և արարք է սա: Սփոփիչ է, սակայն, գիտակցել, որ ԱՄՆ երկու մեծագույն ու խորապես հավատացյալ նախագահները ընդունել են Հայոց ցեղասպանության իրողությունը և անվարան արտաբերել են «գենոցիդ» բառը՝ Բարերար (և դեմոկրատ) Վուդրո Վիլսոնը, Խաչակիր (և հանրապետական) Ռոնալդ Ռեյգանը:

³ «Խելացի ուժ» եզրը բազմիցս օգտագործվել է ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի և Պետդեպարտամենտի ղեկավար Հ.Քլինթոնի կողմից՝ ԱՄՆ ներկայիս արտաքին քաղաքականությունը բնութագրելու համար:

⁴ Troubled partnership: U.S.–Turkish relations in an era of global geopolitical change. F. S. Larrabee. RAND, Project Air Force, MG-8893-AF. 2010. Այս աշխատության զննության և հարակից հարցերին նվիրված մեր ավելի ծավալուն հոդվածը տե՛ս «21-րդ ԴԱԸ» հանդեսի ա.թ. թիվ 3-ում:

Հասկանալի է նաև, որ այս ռազմավարական նահանջն ինչ-որ ժամանակ իր տեղը կարող է զիջել և հակադարձ շարժման: Բայց դրա համար շատ բան պետք է փոխվի աշխարհում, առաջին հերթին դրա համար էական տեղաշարժ է պետք հենց ԱՄՆ հասարակությունում: Իսկ մինչ այդ, կարճաժամկետ-միջ-նաժամկետ հեռանկարում ԱՄՆ այս նահանջն է, որ հանդիսանալու է մեր *իրականության* աշխարհաքաղաքական ամենահիմնական գործոնը: Պրակտիկ հարթությունում մեզ համար սա նշանակում է երկու բան:

* * *

Հայոց եղեռնի ճանաչումը, Հայոց պահանջատիրությունն առաջին հերթին Արդարության և Բարոյականության պահանջներն են: Դրանք առավելագույն հավանականություն ունեն (ունեն) դառնալ քաղաքական և աշխարհաքաղաքական իրողություն միայն այն ժամանակ, երբ *մեսիական* Միացյալ Նահանգները գիտակցում էր (է) իր պատմական ու վսեմ առաքելությունը ողջ աշխարհում ու աշխարհի առջև: Այդպես էր նախագահ Վ.Վիլսոնի ժամանակ, այդպես էր «Ատլանտյան խարտիայի» ժամանակ, այդպես էր նախագահ Ռ.Ռեյզանի օրոք: Եվ այստեղ ԱՄՆ նախագահի կուսակցական պատկանելության խնդիրը երկրորդական է: Շատ ավելի կարևոր է հաղորդ լինել այս երկրի հիմնարար արժեհամակարգին և շարժիչ ուժերին: Գործել դրանց ներդաշնակ, լինել *սինաֆազ* այս ուժերի տևական պարբերական տատանումներին: Այլ ոչ թե գործել միապաղաղ հաստատունությամբ՝ դուրս ընկնելով պատմության ռիթմից: Գործել *հակաֆազ* և ձախողվել այն բարերար ռեզոնանսի առաջացման գործում, երբ, վերջապես, *մեր* արդարության պահանջը կհամընկնի *իրականության* արդարության պահանջին:

Իսկ մինչ այդ, այնքան ժամանակ և քանի դեռ ռազմավարական ու վերլուծաբանական հանրությունների կարկառուն ներկայացուցիչներն ԱՄՆ-ում, ՌԴ-ում և այլուր, արձագանքելով աշխարհում տիրող իրողություններին, նույնականացնում են կայսրությունները հանրապետությունների հետ, Հայաստանը և ողջ Հայությունը պարտավոր են լինել զգոն, աչալուրջ ու հավասարակշիռ: Մենք պարտավոր ենք վարել մեր տարածաշրջանում գործող *բռնը* աշխարհաքաղաքական վեկտորները հավասարակշռող քաղաքականություն, լինել ուժեղ ու հավաք: Այլ ոչ թե ապավինել միայն ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին՝ Մ.Սահակաշվիլու Վրաստանի նման, ապավինել հիմնականում ԱՄՆ-ին, Թուրքիային և Իսրայելին՝ հայր և որդի Ալիևների Ադրբեջանի նման, ապավինել միայն Ռուսաստանին՝ Իսրայել Յավրիի կամ Խաչատուր Աբովյանի նման:

Մինչ այդ, այնքան ժամանակ և քանի դեռ Անկարան չի ճանաչի Թուրքիայի՝ հայերի հայրենագրվող ցեղասպանության կազմակերպման ու իրականացման իրողությունը, Հայաստանի Հանրապետությունը և ողջ Հայությունը

կարող են, ո՛չ պարտավոր են ընկալել «Կովկասում Թուրքիայի խոր և երկարաժամկետ ռազմավարական շահերը»⁵, որպես «Հայկական հարցի» վերջնական լուծմանն ուղղված ռազմավարություն: Որպես մեր ազգային շահերի համար ուղիղ, լուրջ և անմիջական սպառնալիք:

Վերջապես, մինչ այդ, անհրաժեշտ է ամեն գնով խուսափել «Հայաստանի զարգացում՝ զիջելով Հայոց պահանջատիրությունը», թե «Հայաստանի զարգացում՝ առանց զիջման» անպտուղ, դիխոտոմիկ հարցադրումից: Իրականում այն կեղծ է, համարժեք չի արտացոլում իրականությունը և հարցը փակուղի է տանում: Հիշո՞ւմ եք «Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն», ոչ թե կոմս Տոլստոյի (նա օգտագործում էր ավելի իմաստուն «և» մասնիկն ու ավելորդ հարցեր չէր տալիս), այլ մեր ոչ այնքան վաղ անցյալի միանգամայն ժամանակավրեպ հարցադրումը: Կամ՝ «ունիկա՞լ ազգ են արդյոք Հայերը, թե՞ ոչ» անպտուղ, հետևաբար և վտանգավոր բանավեճը, որի բացասական հետևանքները, սպասելի կերպով, չուշացան երևան (և Երևան) գալուց: Մինչդեռ, իրականության սթափ ըմբռնումը, զերծ՝ պահի անցողիկ լարվածությունից և հիմնված լրացման սկզբունքի վրա, միանգամից կհուշեր, որ մարդկային քաղաքակրթության վերջին 5 հազար տարիների ընթացքում խաղաղությունը կազմել է ընդամենը մոտ 300 տարի: Իսկ Հայերը, իհարկե, ունիկալ ազգ են, պատմական իրենց չափազանց ուրույն առաքելությամբ՝ ճիշտ ինչպես աշխարհի շատ ազգեր: Եվ կարիք չկա այստեղ դես ու դեն ընկնել:

Փոխարենը, կարծում ենք, անհրաժեշտ է առաջնորդվել և տարածաշրջանային *ակտորներին* հորդորել ընթանալ հետևյալ տրամաբանության ուղիով: Հայոց ցեղասպանության ճանաչում՝ առաջին հերթին Թուրքիայի կողմից, որպես Կովկասի զարգացումը սանձող կապանքներից ձերբազատման, ողջ տարածաշրջանում իրական, երկարաժամկետ հեռանկարում՝ կայուն տնտեսական ու քաղաքական համագործակցության հաստատման լրջագույն գրավական: Այս խնդիրը ողջ Հայության խնդիրն է, եթե կուզեք՝ ողջ առաջադեմ մարդկության խնդիրը: Առանց այս խնդրի լուծման անհնարին է XXI դարի անխռով ընթացքը: Ոչ ավելի, ոչ պակաս:

Պրակտիկ հարթությունում Կովկասից *մեսիական* ԱՄՆ նահանջով պայմանավորված գործոնը մեզ համար կարևոր է նաև հետևյալով: Արդի աշխարհաքաղաքականությունը, ինչպես և բնությունը, չեն «հանդուրժում վակուում»: Մեր տարածաշրջանում ու Կովկասում *մեսիական* ԱՄՆ նահանջով պայմանավորված վակուումը պետք է լրացվի ինչ-որ ուժով կամ ուժերի համամասնությամբ:

⁵Նույն տեղում, Ch. 5:

Իրոք, Վրաստանը, հասկանալով, որ անխուսափելիորեն մոտենում է ԱՄՆ Հանրապետական կուսակցության պարտությունը գալիք ընտրություններում և տագնապելով «ջուրը գցել» այն հսկայական լոբբիստական ջանքերը, որը թափել էր ԱՄՆ այս կուսակցությանն իր աջակիցը դարձնելու համար, շտապեց դիմել ռազմական ավանտյուրային Հր. Օսիայում՝ ելնելով ընկերներ Ջուդաշվիլու, Օրջոնիկիձեի և Բերիայի կողմից ժառանգված իր մինի-կայսերապաշտական նկրտումներից: Այս արկածախնդրությունը լրջորեն վտանգեց ոչ միայն Կովկասի, այլև ողջ տարածաշրջանի, գուցե և ողջ աշխարհի անվտանգությունը: Զվարճալի է, որ *“The New York Times”* ամսագրի 2008թ. մարտի 27-ի համարում ՌԵՆԴ կորպորացիայի վերը հիշատակված աշխատության հեղինակ պրն Սթիվեն Լարաբին *“Georgia on their minds”* հոդվածում վճռականորեն հակադրվում էր Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելի 2008թ. մարտի 10-ի այն հայտարարությանը, թե «սառեցված հակամարտություններով երկրները տեղ չունեն ՆԱՏՕ-ում»: Փրփուրը բերանին՝ պրն Լարաբին պնդում էր Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անհապաղ անդամակցելու անհրաժեշտությունը, «չափազանց քիչ հավանական» համարելով այն, «որ Ռուսաստանը երբևէ կճանաչի Հր. Օսիայի և Աբխազիայի անկախությունը»⁶: Զվարճալի է այժմ: Իսկ այն ժամանակ դեպքերի մի փոքր այլ ընթացք՝ և մեր ողջ տարածաշրջանը կընկղմվեր աներևակայելի մղձավանջի մեջ:

Ռուսաստանը, հստակ գիտակցելով ԱՄՆ գալիք ռազմավարական նահանջի իրողությունը, գիտակցեց նաև, որ իր համար Կովկասում եկել է «ճշմարտության պահը»: Վրաստանի ագրեսիային նա պատասխանեց ամենայն վճռականությամբ: Իսկ Թուրքիան, որը դեռ 2004-ից հետևողականորեն ընդլայնում և զարգացնում էր հարաբերությունները ՌԴ-ի հետ, տպավորված Վրաստանի ագրեսիայի նկատմամբ ռուսական հակահարվածի վճռականությամբ, շփոթված փորձեր ձեռնարկեց Կովկասում իր ազդեցությունը վերագտնելու և վերիմաստավորելու ուղղությամբ: Թուրքիայում շփոթը խորացավ Հր. Օսիայի և Աբխազիայի անկախության՝ ՌԴ-ի կողմից ճանաչումով, Հայաստանի նախագահի՝ Թուրքիայի նախագահին ուղղված պատմական հրավերով և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված Հայաստանի նախաձեռնողական քայլերով, որոնք, ամենայն հավանականությամբ, ի սկզբանե ունեին ՌԴ ծավալուն սատարումը:

Աղբբեջանը, շունչը պահած, հետևում էր իրադարձություններին և գիտակցելով, որ կարող է կորցնել այն լծակը, որն օգտագործում է Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ վարվող բանակցություններում, թուրք-հայկական մերձեցման և սահմանի բացման հարցում Թուրքիային իր ռազմավարական, էներգետիկ, քաղաքական և այլ օժանդակումն այս բանակցություններ-

⁶ <http://www.nytimes.com/2008/03/27/opinion/27iht-edlarrabee.1.11471355.html>

րում պայմանավորեց իր համար նպաստավոր առաջխաղացմամբ: Այսպիսի պայմանավորումը, հակառակ «ճանապարհային քարտեզի» տառին և ոգուն, փաստորեն վիժեցրեց թուրք-հայկական մերձեցման գործընթացի ներկայիս փուլը, որի տրամաբանական միջակետը դրվեց Հայաստանի նախագահի ս.թ. ապրիլի 22-ի հրամանագրով: Ասում ենք միջակետ, որովհետև վստահ ենք, որ թուրք-հայկական մերձեցման գործընթացը դեռ շարունակվելու է: Պետք է շարունակվի: Ի բարօրություն Կովկասում և ողջ տարածաշրջանում ապրող ժողովուրդների:

Վերջապես, Իսրայելը, վերաշեշտադրեց իր ռազմավարական նպատակներին ԱՄՆ ներքաշվածության խնդիրը՝ առաջին պլան մղելով նավթային գործոնը և Իրանին պատժելու անհրաժեշտությունը: Մինչ այդ, Իսրայելը շտապեց կրկին խուժել Գազայի հատված, կոշտացնել դիրքորոշումը հրեական բնակավայրերի կառուցման գործում և, փաստորեն, հակադրվել «երկու ժողովուրդ - երկու պետություն» գաղափարին: Իսկ Գերմանիան, որը ոչ պակաս հստակությամբ գիտակցում էր ԱՄՆ ռազմավարական նահանջի մոտալուտ սկիզբը, հոգնած ԵՄ անաշխատունակությունից ու տձևությունից, վիրավորված այն քաղաքական նվազ դերակատարումով, որն ունի եվրոպական այս հսկան Միության քաղաքական գործերում, իր աշխարհաքաղաքական հայացքները սկսեց ուղղել դեպի Ռուսաստան և անդին՝ Կովկաս ու Միջին Արևելք:

Կովկասում *մեսիական ԱՄՆ* նահանջով պայմանավորված վակուումը մեզ մոտ, ամենայն հավանականությամբ, կլրացվի ՌԴ և Գերմանիայի, ինչպես նաև Իրանի և Թուրքիայի ուժային աշխարհաքաղաքական վեկտորների հավասարակշռումից զոյացած համամասնությունով: Մեզ համար նորությունն այստեղ Գերմանիայի տարածաշրջանային աշխարհաքաղաքական դերակատարման հնարավորությունն է և սկիզբը: Հանգամանք, որը, կարծում ենք, գուցե ենթագիտակցաբար, ստիպել էր պրն Լարաբիին օգտագործել *Ordnungsmacht* եզրը ՌԵՆԴ-ի վերը քննվող նյութում՝ հայ-թուրքական մերձեցմանը նվիրված հատվածում: Գերմանիայի աշխարհաքաղաքական դերակատարման աճի հանգամանքը չի վրիպել հայրենական վերլուծաբանների աչքերից: Այս առումով կուզենայինք ընդգծել խնդրո առարկա, ժամանակագրորեն, թերևս, առաջին և ամբողջական հրապարակումը⁷: Համաձայնելով այստեղ կատարվող վերլուծության հետ՝ կուզենայինք պարզապես հավելել հետևյալը:

XX դարի ընթացքում առնվազն երեք անգամ Վրաստանի ռազմավարական շահերը հակադրվել էին Հայաստանի ազգային շահերին, իսկ վարվող

⁷ <http://www.noravank.am/am/?page=analitics&nid=2455> (Գ. Տեր-Հարությունյան, Ռուսաստան-Գերմանիա. հնարավոր սցենարներ տարածաշրջանային անվտանգության համատեքստում, 26 ապրիլի, 2010թ.):

գործողությունները Հայաստանի ազգային շահերի և Հայ ժողովրդի համար հանդիսացել էին ուղիղ, լուրջ և անմիջական վտանգ: Եվ Հայաստանը վճարել է դրա աշխարհաքաղաքական, ռազմավարական, ազգային և բարոյական էական գինը: Նոր` XXI դարի կարճ պատմության ընթացքում առնվազն մեկ անգամ Վրաստանի ռազմավարական շահերը հակադրվել են Հայաստանի ազգային շահերին: Եվ նորից Հայաստանը վճարել է դրա գինը: Եվ այս ամենի ակունքում ընկած է դեռ կայսերական Գերմանիայի գենշտաբի ռազմավարական ծրագիրը` մեկուսացնել Ռուսաստանը Կովկասից ու Միջին Արևելքից` Կովկասում ստեղծելով միայն մեկ քրիստոնեական բուֆերային պետություն, այն է` ուղղափառ Վրաստանը: Բացի այդ, Կովկասում նախատեսվում էր ունենալ ևս մեկ` մահմեդական պետություն, Կովկասի թաթարներից բաղկացած երկիր: Խոսքը ներկայիս Ադրբեջանի մասին է: Ինչպես տեսնում ենք, այս տեսլականում տեղ չկա ոչ Հայերի, ոչ Հայաստանի համար: Այս ամենը հանգիստ խղճով կարելի էր թողնել պատմաբանների և հարցի պատմությամբ զբաղվող ուսումնասիրողների դատին, եթե չլինեք հետևյալ կարևոր հանգամանքը:

Աշխարհաքաղաքական կոնստրուկտներն ունեն շատ մեծ կենսունակություն: Մի անգամ ձևակերպվելով «ուժային կենտրոնների» կողմից ու կյանքի կոչվելով բեկումնային ժամանակներում` դրանք չեն անգոյանում քաղաքական տվյալ իրադրության սպառումով և գործընթացների ավարտով: Դրանք նորից ի հայտ են գալիս բեկումնային նոր ժամանակներում: Մեզ համար, մեր տարածաշրջանի համար այսպիսի բեկումնային ժամանակներ եղան Ռուսական կայսրության հոգեվարքը XX դարի սկզբին և ԽՍՀՄ փլուզումը XX դարի վերջին: Եվ XX դարասկզբի հին աշխարհաքաղաքական կոնստրուկտները չուշացան երևան գալ դարավերջին: Նկատի ունեն ԽՍՀՄ քաղբյուրոյի անդամ, ԽՍՀՄ ՊԱԿ ղեկավար Հ. Ալիևի, ԽՍՀՄ քաղբյուրոյի անդամ և ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Է. Շևարդնաձեի և մի շարք թուրք, հրեա ու ամերիկացի այն ռազմավարներին, որոնք 90-ականների 2-րդ կեսին հղացան «Ալիևի դոկտրինը», այն է. 1. համակցել Ադրբեջանը և Կենտրոնական Ասիան` Թուրքիայի, Իսրայելի և Եվրոպայի հետ էներգետիկ, տնտեսական, քաղաքական, իսկ այնուհետև` անվտանգության համակարգերով, 2. կտրել Կովկասը Ռուսաստանից, մեկուսացնել Ռուսաստանը և Իրանը ողջ տարածաշրջանից, 3. խեղդամահ անել Հայաստանը: Դատելով ներկայումս բաց աղբյուրներից` այստեղ գերմանական մասնակցությունը փաստագրված չէ: Սակայն, չի կարելի չնկատել, որ «Ալիևի դոկտրինը» նման է կայսերական Գերմանիայի գենշտաբի XX դարի սկզբի տեսլականին` ինչպես երկվորյակ եղբայր:

⁸Ձևակերպումը մերը չէ: Այն կարելի է գտնել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից 1998թ. դեկտեմբերին կազմված և 2007թ. ապրիլին գաղտնագերծված OREA CEI-9812 փաստաթղթում:

Հետևաբար, մեզ համար, ԵՄ ամենաուժեղ տերության՝ Թուրքիայի վաղեմի բարեկամ, ԵՄ-ում Վրաստանի կուրատոր Գերմանիայի Դաշնային Հանրապետության վերադարձը Կովկաս հասկանալի է, ողջունելի և օգտակար միայն մեկ պարագայում. այն չպետք է սատարի Կովկասի ներկայիս պառակտումը, այն չպետք է խրախուսի «տարածաշրջանային էներգետիկ և տնտեսական ծրագրերից Հայաստանի արտաքսումը»: Այն պետք է ուղղված լինի Հայաստանի, Իրանի և ՌԴ տարածաշրջանային լիարժեք ինտեգրմանը՝ առանց մեզ խեղդամահ անելու կամ մեր ձեռքերը ոլորելու սպառնալիքի:

* * *

Ընդհանրապես, մեծ հավանականությամբ կարելի է պնդել, որ կարճաժամկետ հեռանկարում մեր տարածաշրջանում կմեկնարկի վերը նշված վակուումի լրացմանն ուղղված տենդագին ակտիվություն: Ամենաբարձր մակարդակի այցելությունները տարածաշրջանում կարճանագրվեն անախադեպ հաճախությամբ, մամուլի էջերը կողողվեն այս ամենի տարաբնույթ վերլուծություններով և այլն: Գալիք այս եռուզեռի ժամանակ մեզ համար, կարծում ենք, կտրականապես կարևոր է ամրագրել մի քանի բազիսային իրողություն, որոնք և ուրվագծում են մեր տարածաշրջանում *իրականության* աշխարհաքաղաքական հիմքը:

Բացառապես խաղաղ և օրինական արտահայտված Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի արտահայտմանն ի պատասխան Ադրբեջանը դիմեց ռազմական ագրեսիայի, որում և կրեց ռազմական չոր պարտություն⁹: Այս երկիրը կամ պետք է սանձազերծի նոր պատերազմ կամ մշակի ինքնուրույն Լեռնային Ղարաբաղի հետ իր *modus vivendi*-ն: Ճիշտ այնպես, ինչպես որ ՌԵՆԴ կորպորացիայի վերոհիշյալ աշխատությունում դա առաջարկվում է անել Թուրքիային՝ Իրաքի հյուսիսում գործող Քրդստանի տարածքային կառավարության հանդեպ:

Թուրքիան, 1993թ. փակելով սահմանը Հայաստանի հետ, Հայաստանի Հանրապետության նկատմամբ դիմեց ռազմական գործողության և, հետևաբար, զրկեց իրեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում միջնորդ հանդիսանալու որևէ բարոյական ու տրամաբանական հիմքերից: Գոնև և ճիշտ մինչև այն պահը, երբ նորից կբացի սահմանը Հայաստանի հետ՝ առանց 3-րդ կողմերի խնդիրների հետ որևէ արձարձման: Բացի այս, Թուրքիան կանգնած է ինքնության խոր ճգնաժամի առջև և տարածքային

⁹ Ձևակերպումը մերը չէ: Այն կարելի է գտնել ԱՄՆ Գենտրոնական հետախուզական վարչության կողմից 1999թ. նոյեմբերի 15-ին կազմված և 2007թ. ապրիլին գաղտնագերծված *SEIB 99-264CX* փաստաթղթում:

չկարգավորված վեճեր ունի իր սահմանների գրեթե ողջ պարագծով՝ Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի և Իրաքի հետ: Տարածքային վեճը Հայաստանի հետ կարգավորված չէ, բայց նաև ակտիվ չէ: Թուրքիան շարունակում է եռանդուն մերժել Հայերի հայրենագրկող ցեղասպանության կազմակերպման և իրականացման իրողությունը: Այսպիսի դիրքորոշումը մեր ողջ տարածաշրջանը զրկում է զարգացման ռազմավարական հեռանկարից:

Վրաստանը հիմնովին ձախողվեց իր հետխորհրդային սահմանների ներսում ազգային համաձայնության քաղաքականություն մշակելու և վարելու գործում: Դիմելով ռազմական արկածախնդրության՝ այն վտանգեց ողջ տարածաշրջանի անդորրն ու կայունությունը և ուղղակիորեն կանգնեց տարածքային ամբողջականության պահպանման հարցի առջև:

Իրանի մեկուսացումը տարածաշրջանային զարգացումներից հանգեցնում է նրան, որ «այս տարածաշրջանը զարգանում է աննորմալ կերպով»¹⁰: Ռուսաստան – Հայաստան – Իրան տնտեսական, էներգետիկ, մշակութային, քաղաքական և աշխարհաքաղաքական համագործակցությունը մեր տարածաշրջանը կայունացնող ու հավասարակշռող արդյունավետ ռազմավարական գործոն է: Այն կարող է ընդլայնվել և ներառել Ռուսաստան – Հայաստան – Թուրքիա համագործակցության բաղադրիչը, որը կլրացնի Թուրքիա-Իրան համագործակցության անխուսափելի զարգացումը: Այս ամենին Գերմանիան կարող է բերել իր էական սատարումն ու օժանդակումը:

Արևմուտքի անտարբեր աչքերի առջև Հայաստանը շարունակում է շնչահեղձ լինել պարտադրված շրջափակման և տարածաշրջանային ենթակառուցների զարգացումից «արտաքսվածության» հետևանքով: Հայաստանի Հանրապետության անվտանգության ռազմավարական նշանակության հիմնական գործոնը եղել է, է և կլինի հայ զինվորի մարտունակությունն Արցախում և մեր սահմաններին: Միջազգային տիրույթում կարճաժամկետ-միջնաժամկետ հեռանկարում Հայաստանի անվտանգության համակարգը կշարունակի հենվել ՌԴ-ի հետ Մեծ պայմանագրի և ՀԱՊԿ-ի վրա: Անցած երկու տասնամյակների ընթացքում Արևմուտքը ձախողվեց այս հարցում Կովկասյան տարածաշրջանին ռազմավարական այլընտրանք առաջարկելու գործում՝ ոչ վերջին հերթին այն բանի հետևանքով, որ որդեգրեց և իրականացրեց իր հիմքում՝ արատավոր և, վերջին հաշվով՝ անիրատես «Ալիևի դոկտրինը»:

¹⁰ Ձևակերպումը մերը չէ: Այն կարելի է գտնել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության կողմից 1999թ. նոյեմբերին պատրաստված և 2007թ. ապրիլին գաղտնագերծված OTI 99-10031 հաշվետվությունում:

* * *

2008թ. օգոստոսից հետո շատ բան փոխվեց Կովկասում, մեր ողջ տարածաշրջանում, մեր մտածելակերպում և հաշվարկներում: Մակայն ամենակարևոր փոփոխությունը, կարծում ենք, այն է, որ վերջապես կարելի է ասել. եկել է լրջանալու պահը: Այն հասունացել է թե՛ Հայաստանում, թե՛ Թուրքիայում, թե՛ աշխարհում:

22 ապրիլի - 9 մայիսի 2010թ.

ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

*Արեստակես Միմալոդյան**

Թուրքական ազդեցիկ կուսակցական «ճամբարներում» տարբեր տեսլականներ կան Թուրքիայի ապագայի վերաբերյալ, ինչի արդյունքում բազմաբևեռ, հակոտնյա գաղափարախոսությունների (նեոօսմանիզմ, նեոպանթուրքիզմ, նեոքեմալականություն, թուրքական եվրասիականություն) շուրջ քննարկումները շարունակվում և արձագանք են գտնում Թուրքիայի հասարակական կյանքում: Այս նոր գաղափարախոսությունները կարևոր են նաև ներքաղաքական մրցակցությունում կուսակցությունների հաջողության համար:

Նեոօսմանիզմ

Վերջին տարիներին, երբ Թուրքիայի իսլամական կողմնորոշում ունեցող քաղաքական էլիտան արտաքին քաղաքականության նոր ռազմավարությունում նախապատվությունը տվեց նեոօսմանիզմին (*Neo-Osmanlicilik*), այդ գաղափարախոսությունն աստիճանաբար դարձավ ներքին և արտաքին քաղաքականության առանցք:

Պետական նպատակաուղղված քարոզչությունն այսօր նեոօսմանիստական տրամադրություններ է ձևավորել հասարակության տարբեր շերտերում: Հասարակությունը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում պատմաֆանտաստիկ գեղարվեստական «Օսմանյան հանրապետություն» ֆիլմի հանդեպ, որը պատմում է օսմանյան սուլթանի իշխանության ներքո գտնվող Թուրքիայի մասին: Երիտասարդների շրջանում ընդունված է ենիշերիների պատկերներով և «Կայսրությունը պատասխան հարված կհասցնի» մակագրությամբ վերնաշապիկներ կրելը: Անցյալը քաղքենիական պատկերացումներում ներկայանում է որպես *Pax Ottoman*-ի «ոսկե դար», երբ Միջերկրական ծովում իշխում էին խաղաղությունը, հանգստությունը, բարգավաճումն ու կրոնական հանդուրժողականությունը: «Եվ այդպիսի տրամադրությունները նպաստում են, որպեսզի Եվրոպան չընդունի Թուրքիային եվրոպական հասարակության մեջ»¹:

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

¹ *Laure Marchand, La Turquie saisie par l'«ottomania», LE FIGARO, 07.01.2010.*

«Մեծ քաղաքականությունը» գործադրելու համար ԱԶԿ-ն օգտագործում է պետական բազմաթիվ կառույցներ, որոնք հասարակության «ուսուցանում» են օսմանական ոգով:

Նեոօսմանիզմի կենսագործման համար կարևոր է նաև իսլամական, մասնավորապես՝ արաբական երկրներում համապատասխան տրամադրությունների ձևավորումը, որի ուղղությամբ նույնպես տարվում է նպատակաուղղված քաղաքականություն: Գաղափարախոսությունն «արտահանվում» է ինչպես թուրքական «սփյուռք», այնպես էլ արաբական երկրներ: Նշանակալի իրադարձություն էր 2010թ. հունվարին թուրքական բուհում «նեոօսմանյան» նախաձեռնություն իրականացնելու ԱԶԿ և բարձրագույն կրթության խորհրդի միջև ձեռք բերված համաձայնությունը, որով անվճար հիմունքներով Թուրքիայի համալսարաններ են ընդունվելու արաբական երկրների, մասնավորապես՝ սիրիացի ուսանողներ:

Մեր օրերում նեոօսմանականության աշխարհաքաղաքական հայեցակարգի գլխավոր ճարտարապետն է համարվում Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն: Այս գաղափարախոսության գլխավոր նպատակներն արտացոլված են նրա «Խորքային ռազմավարություն» աշխատությունում: Սակայն գաղափարախոսության ակունքները գնում են մինչև Թուրքիայի նախկին նախագահ Թուրգութ Օզալը, որի կարծիքով՝ երկրի բնակիչներին և բալկանյան մուսուլմաններին համախմբողն իսլամն է, որոնց մեկ ընդհանուր պետության գաղափարի շուրջ կարող է միավորել նորովի մշակված գաղափարախոսությունը²: Օզալը չի նշել, թե որ գաղափարախոսությունն է ի վիճակի լուծել նման խնդիրներ, սակայն ակնարկվում էր օսմանականության գիրկը վերադառնալու Թուրքիայի ձգտումը:

2009թ. նոյեմբերի վերջին ելույթ ունենալով Արդարություն և զարգացում կուսակցության անդամների առջև՝ Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը հայտարարեց, որ իր երկիրն իրականացնում է նեոօսմանիզմի քաղաքականություն: *«Կա ժառանգություն, որը թողել է Օսմանյան կայսրությունը: Մեզ անվանում են «նեոօսմաններ»։ Այո, մենք «նեոօսմաններ» ենք: Հարկադրված ենք զբաղվել հարևան երկրներով և գնում ենք նույնիսկ Աֆրիկա: Մեծ տերությունները շփոթված հետևում են դրան»*³, - ասել էր նա:

Այնուհետև Դավութօղլուն հստակեցրեց, որ Թուրքիան չի սահմանափակվելու մեկ գաղափարի իրականացմամբ, այլ իրար պետք է հաջորդեն Թուրքիայի ծավալապաշտական մյուս գաղափարախոսությունները. *«Օսմանյան կայսրությունը մեր պատմության մի մասն է, իսլամը՝ մեր մշակույթի տարրերից մեկը: Արևմտաեվրոպական ուղղվածությունը մեր պատմական*

² Neo Osmanlı Geri mi Dönüyor?, <http://www.farklitarih.com/2009/06/neo-osmanli-m-donuyor.html>.

³ Erhan Seven, Sarkozy gittiği her yerde bizi görecek, Yeni Şafak, 24.11.2009.

փորձն է, թյուրքիզմը՝ գլխավոր շարժումը»⁴, - նշել է նա:

Այսինքն՝ առանձնացվում է երեք հիմնական բնութագրիչ. Օսմանյան կայսրություն - օսմանիզմ, որը փոխկապակցված է *խալամի* հետ, *թյուրքիզմ* - ազգային ինքնագիտակցության պահպանման հիմնական գաղափարախոսություն, սույն գաղափարախոսության միջնորդությամբ՝ թյուրքախոս ժողովուրդներին օսմանիզմի դաշտ բերելու պարզագույն ճանապարհ:

Ինչպես տեսնում ենք, ԵՄ անդամ դառնալու Թուրքիայի ձգտումը պատմական փորձ է: Սակայն դա չի ենթադրում արտաքին քաղաքականության արևմտյան ուղղությունից հրաժարում, այլ արևելյան ուղղությունը դիտում է որպես դրա այլընտրանք: Դավութօղլուն կարծում է, որ ԱՄՆ-ից և Եվրոպայից կախվածությունը խախտել է Թուրքիայի արտաքին քաղաքականության հավասարակշռությունը, վնասել նրա ազգային և տարածաշրջանային շահերին, այդ իսկ պատճառով պետք է տեր կանգնել «օսմանյան» ժառանգությանը:

Ըստ վերլուծաբանների՝ Թուրքիայի արտաքին քաղաքականությունում նեոօսմանիզմը հիմնվելու է մի քանի սկզբունքային դրույթների վրա.

1. Թուրքիան այլևս հանդես չի գալիս ԱՄՆ և ՆԱՏՕ «կրտսեր գործընկերոջ» դերում, քանի որ այս երկիրը համարվում է Կենտրոնական Եվրասիայի և տարածաշրջանի անվտանգության գլխավոր բաղադրիչներից մեկը: Այստեղից էլ բխում են Կովկասում «ԵԱՀԿ» ստեղծելու և Մերձավոր Արևելքում միջնորդական նախաձեռնություն ցուցաբերելու գաղափարները:
2. Չպետք է կարծել, թե «նեոօսմանիզմը» սպառնալիք է Արևմուտքին և Ռուսաստանին:
3. «Նեոօսմանիզմն» ագրեսիվ կողմեր չունի⁵:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ նեոօսմանիզմն ունի երեք ընդգծված գործոն.

1. Երկրի ներսում և մուսուլմանական աշխարհի հետ (Մերձավոր Արևելք, Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկա) գալ ընդհանուր համաձայնության: Այդ տարածաշրջանների երկրների դեմ հանդես չգալ իմպերիալիստական դիրքերից: Օսմանյան կայսրության մաս կազմող նախկին երկրներին օսմանիզմի դաշտ բերել «փափուկ» և հավասարակշիռ քաղաքականությամբ:
2. Թուրքիան պետք է վարի դիվանագիտական և տնտեսական առավել ակտիվ քաղաքականություն՝ տարածաշրջանի առանցքային երկիր դառնալու համար:

⁴ Nur Batur, 'Yeni Osmanlılar sözü iyi niyetli değil', Sabah gazetesi, 04.12.2009:

⁵ Валерий Петров, Новая внешняя политика Турции, <http://www.islamnews.ru/news-21431.html>:

3. Նեոսամանիզմի քաղաքականությունը Թուրքիային հնարավորություն է տալու Արևմուտքից «պոկել» այն, ինչը մուսուլմանական է՝ Բոսնիա, Ալբանիա, Կոսովո, անգամ հիմնականում քրիստոնյա Մակեդոնիա և Բուլղարիա (հաշվի առնելով այս երկրներում մուսուլման բնակչության առկայությունը)⁶:

Մի շարք վերլուծությունների համաձայն՝ Անկարայի ղեկավարությունը «նեոսամանիզմի» քաղաքականության իրականացման համար որպես միջոց օգտագործելու է, այսպես կոչված, ինտեգրացիոն միջանցքները, ինչը սկիզբ է առնելու Թուրքիայից: Այն հիմնված պետք է լինի թուրքական «soft power»-ի վրա, որն ունի երկու հիմնական տարր՝ տնտեսական հզորություն և ղեմնկրատիայի փորձ:

Հայտնի նման միջանցքները երեքն են.

1. Թուրքիա-Սիրիա-Լիբանան-Հորդանան-Եգիպտոս, հետագայում ներառելով Իսրայելն ու պաղեստինյան տարածքները (առաջին միջանցք):
2. Իրաք և Պարսից ծոցի երկրներ (երկրորդ միջանցք):
3. Իրան և Պակիստան (երրորդ միջանցք)⁷:

Ուշադրության արժանի է հասկապես երրորդ միջանցքը, որտեղ միա-հյուսված են պանթուրքիզմի և եվրասիականության դրույթները: Մի կողմից՝ Թուրքիան ձգտելու է իր ազդեցության ոլորտ ներքաշել Իրանն ու Պակիստանը, ինչպես նաև Աֆղանստանը, մյուս կողմից՝ հետխորհրդային թուրքական աշխարհը՝ Կենտրոնական Ասիան և Ադրբեջանը:

Միջազգային հարաբերությունների և ռազմավարական վերլուծությունների կենտրոնի տնօրեն Սինան Օղանի կարծիքով՝ Թուրքիան միակ երկիրն է, որը կարող է հավակնել Մերձավոր և Միջին Արևելքն արդիականացնողի դերին և ունակ է այդ տարածաշրջանը «հաշտեցնել» Արևմուտքի հետ: Ակնհայտ է, որ Թուրքիան նպատակ ունի ոչ միայն վերականգնել Օսմանյան կայսրության նախկին սահմանները, այլև ձեռք բերել տարածաշրջանի էներգետիկ պաշարներն ու ենթակառուցվածքները, տրանսպորտային հանգույցները, բանկային և հեռահաղորդակցության ցանցերը, ինչը երկիրը կվերածի աշխարհաքաղաքական գերտերության⁸:

Աշխարհաքաղաքական գերտերություն դառնալու նկրտումներն ակնհայտորեն երևում են Ա.Դավութօղլուի 2010թ. հունվարի 8-ի ելույթում՝ Թուր-

⁶ Ömer Taşpınar, Neo-Ottomanism and Kemalist foreign policy, <http://www.todayszaman.com/tz-web/columnists-153882-neo-ottomanism-and-kemalist-foreign-policy.html>.

⁷ Илья Герман, Турция идет на восток, Эксперт, #26, с.66, 2009. http://www.expert.ru/printissues/expert/2009/26/turciya_idet_na_vostok/#print.

⁸ Նույն տեղում:

քիայի դիվանագիտական կորպուսի հետ հանդիպման ժամանակ: Նա, մասնավորապես, ասել է, որ Թուրքիայի գերխնդիրը ոչ թե տարածաշրջանային, այլ համաշխարհային տերության դերակատարում ունենալն է, ինչը թույլ են տալիս նրա ուրույն աշխարհագրական դիրքը, պատմությունն ու դիվանագիտական փորձը⁹:

Թուրքիայի արտաքին քաղաքականության որդեգրած սույն մոդելը նոր է գործողության մեջ դրվում: Հետևաբար, ելնելով երեք տարածաշրջանների (Մերձավոր Արևելք, Բալկաններ, Հյուսիսային Աֆրիկա) հանդեպ ունեցած հավակնություններից, քաղաքական, տնտեսական և այլ գործոնների առանձնահատկություններից՝ դժվար է կանխատեսել գերակայությունը կտրվի ռազմական ուժի ն, թե՛ դիվանագիտությանը: Պարզ է, որ «բաց» դիվանագիտությունը չի կարող օգնել Թուրքիային, քանի որ արաբական աշխարհը չի հրաժարվի ձեռք բերած ինքնուրույնությունից, հետևաբար Թուրքիան պետք է իրականացնի «լուռ» դիվանագիտություն՝ օգտագործելով բոլոր տեսակի լծակները: Թերևս, միանալու քաղաքական կամք կարող են դրսևորել Սիրիան և Պաղեստինը՝ հաշվի առնելով իսրայելական գործոնը: Իսրայելի նկատմամբ պասիվ դիրքորոշումը և նավթային հարուստ ռեսուրսներ ունեցող մյուս արաբական երկրների հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականությունը կարող են բախման հանգեցնել անգլո-ամերիկյան ուժերի հետ: Այնպես որ, Թուրքիան այս հարցում բազմաթիվ խնդիրներ ունի:

Կան վկայություններ նաև այն մասին, որ չափավոր իսլամիստների Արդարություն և զարգացում կուսակցությունն ամերիկյան մշակում է, և դրա հեղինակը հանրահայտ նեոկոն Փոլ Վուլֆովիցն է¹⁰: Պատահական չէ, որ Թուրքիայի այս նոր քաղաքականության հետևում կանգնած են նաև ամերիկյան նեոպահպանողականները (նեոկոններ):

Թուրքական առաջատար վերլուծական կենտրոնների փորձագետների գնահատականներով՝ այս գաղափարախոսությունն ԱՄՆ-ի կողմից թուրքական վերնախավին պարտադրված քաղաքականություն է: Համարվում է, որ այն ԱՄՆ և «ուղեղային կենտրոնների» մշակած, ռազմավարական հեռահար նպատակներ հետապնդող ծրագիր է. միջնորդ պետության, այս պարագայում՝ Թուրքիայի միջոցով տարածաշրջանում, մասնավորապես՝ արաբական աշխարհի վրա իշխելու քաղաքականություն: Այս առումով «նեոսամանիզմ» ընդհանուր աղերսներ ունի ԱՄՆ-ի կողմից մշակված հայտնի «Մեծ Մերձավոր Արևելքի» նախագծի հետ:

Դավութօղլուն չի թաքցնում, որ գաղափարախոսության ակունքները և ընդհանրապես «նեոսամանիզմ» եզրը ծնունդ են առել ԱՄՆ-ից, և որ Թուրքիա-

⁹ Свистунова И.А., Внешняя политика Турецкой Республики в 2010 году, <http://www.iimes.ru/rus/stat/2010/24-01-10.htm>.

¹⁰ Գաղիկ Տեր-Հարությունյան, ՀՀ – Թուրքիա հարաբերությունների համատեքստը, <http://www.noravank.am/am/?page=analytics&nid=2044>

յի ապագայի մասին իր տեսլականի հիմքում մասամբ ընկած են Ջորջ Ֆրիդմանի աշխատության որոշ դրույթներ¹¹:

Գաղափարախոսության խրախուսումն ԱՄՆ-ի կողմից հետապնդում է մեկ այլ նպատակ ևս՝ չեզոքացնել Թուրքիայի ազգայնական և քեմալական ուժերի նկրտումները, քանի որ ԱՄՆ-ը չի ցանկանում այդ երկիրն ազգային ուժեղ պետություն տեսնել¹²: Բացի այդ, ԱՄՆ-ին ձեռնտու է իսլամական աշխարհի «առաջնորդի» դերում տեսնել իր դաշնակից Թուրքիային՝ Իրանի փոխարեն:

Նեոսումանիզմի իսլամական հենասյունը

Նեոսումանականության գաղափարախոսությունից չի կարող առանձնանալ իսլամը: Իսլամական գործոնը (*İslamcılık*) հանդես է գալու որպես համախմբող ուժ, քանի որ գաղափարախոսության հիմնական թիրախ դիտվում է իսլամական աշխարհը, առաջին հերթին՝ Մերձավոր Արևելքի արաբական ու Հյուսիսային Աֆրիկայի մի քանի իսլամական երկրներ: Այս ամենն ուղղված է նաև Իսրայելի քաղաքականության դեմ: Ինչպես ցույց են տալիս թուրք-իսրայելական հարաբերությունների վերջին զարգացումները, արվում են գաղափարախոսության իրականացման առաջին քայլերը՝ իսլամական աշխարհին սիրաշահելու նպատակով:

Հետագայում այն կընդգրկի բալկանյան երկրները՝ Ալբանիան, Բոսնիան, Մակեդոնիան, Բուլղարիան, որից հետո, ըստ նեոսումանականների, Ստամբուլը ողջ իսլամական աշխարհի համար պետք է դառնա նեոխալիֆայության (*Neo-Halifelik*) կենտրոն:

Գաղափարախոսության ծիրում են գործում հիմնականում իշխող ԱԶԿ-ն, իսլամական կողմնորոշում ունեցող Ալլահի բանակ, Ալլահի զինվորներ, Իսլամական հեղափոխության մարտիկներ խմբակցությունները:

Քեմալական կողմնորոշում ունեցող զինվորականությունն, ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության հետ միասին, անընդունելի է համարում այս նախաձեռնությունը: Նրանց կարծիքով՝ ներկայիս վարչակարգը որդեգրել է հավակնոտ, անիրատեսական նախագիծ, որը հեռացնելու է Թուրքիային Աթաթուրքի հանրապետական սկզբունքներից: Մինևույն ժամանակ, քեմալականներին մտահոգող ևս մեկ գործոն է «քրդական հարցը», քանի որ նեոսումանիզմի կիրառման դեպքում քրդերը բոլոր մուսուլմանների նման կունենան լայն մշակութային ինքնուրույնություն:

Փաստորեն, նեոսումանիզմը բազմամշակույթ հանրության գաղափարական հիմնավորում է: Դրանով այն հակադրվում է քեմալականությանը, որը ձգտում է թուրքական պետության միատարրության:

¹¹ Nur Batur, 'Yeni Osmanlılar sözü iyi niyetli değil', Sabah gazetesi, 04.12.2009.

¹² Soner Yalçın, Türk Silahlı Kuvvetleri neden New York aydınlarının hedefinde, Hürriyet gazetesi, 19.10.2008.

Նեոպանթյուրքիզմ

Հաջորդ գաղափարախոսությունը, որը վերածնունդ է ապրում, պանթյուրքիզմն է, նորովի մեկնությամբ՝ նեոպանթյուրքիզմը: Պանթյուրքիզմը հզոր գործիք էր ԱՄՆ-ի համար ընդդեմ Խորհրդային Միության: Սակայն վերջինիս փլուզումից հետո, երբ Թուրքիայի՝ թյուրքախոս ազգերին համախմբելու փորձերն ավելի ուշալ հարթության մեջ դրվեցին, դա ԱՄՆ-ին անհանգստանալու տեղիք տվեց: Թեև ամերիկյան քաղաքական շրջանակները դեռ օգտագործում են պանթյուրքական (ուլդուրական) գործոնը՝ այն ուղղելով գլխավորապես Չինաստանի դեմ, որն այսօր կարող է մրցակցել ԱՄՆ-ի հետ:

Պանթյուրքիստների գլխավոր նպատակը թյուրքախոս ժողովուրդներին մեկ ընդհանուր պետության մեջ ընդգրկելն է՝ հաշվի չառնելով նրանց աշխարհագրական տարածման սահմանները, մշակութային տարբերությունները:

Այս գաղափարախոսության իրականացման ճանապարհին առաջնային է համարվում թյուրքական էթնոսի համախմբումը՝ Չինաստանից մինչև Ադրիատիկ ծով: Կարևորվում է նաև տնտեսական գործոնը, որն այդ համախմբմանը տալիս է ավելի ընդգծված բնույթ, քանի որ Միջին Ասիայի նավթային պաշարները՝ «թուրանական նավթը», Թուրքիայի էներգետիկ խնդիրներին լուծման ճանապարհն են:

Նեոսումանների և նեոպանթյուրքիստների միջև բավական մեծ տարաձայնություններ կան, քանի որ վերջիններիս համար հիմնական նշանակետը էթնիկական գործոնն է, որը համախմբում է թյուրքախոս ժողովուրդներին, այլ ոչ թե կրոնականը (սեմական արաբներ, բալկանյան մուսուլմաններ): Անգամ այս տարաձայնության պարագայում նեոսումանները պանթյուրքիզմը դիտում են որպես այլընտրանքային ճանապարհ, օսմանիզմին հետևող, այն լրացնող գործոն, որոնց վերջնականատակն է դառնալու թյուրքական եվրասիականությունը:

Այնպես որ, թյուրքիզմը որպես գաղափարախոսություն երբևէ հետընթաց չի ապրել և կարող է օգտագործվել տարածաշրջանային անկանխատեսելի փոփոխության դեպքում: Ցայտուն օրինակ է Իրաքյան վերջին պատերազմը, երբ ազգայնական ուժերը, այդ թվում և ուլտրազգայնական գեներալները, քարոզչական և ռազմական օգնություն ցուցաբերեցին իրաքյան թյուրքմեններին:

Պանթյուրքիստական գաղափարախոսության կրողներն են ԱՇԿ-ն (Ազգայնական շարժում կուսակցություն), զինվորականության ուլտրազգայնական թևը, կիսառազմականացված «Գորշ գայլեր» ազգայնական-ծայրահեղական խմբավորումը:

Թուրքական եվրասիականություն

Եվրասիականության գաղափարախոսությունը և դրա նկատմամբ պետական մակարդակով հետաքրքրությունը համեմատաբար նոր երևույթ են: Այն ընդհանուր առմամբ տարբերվում է ռուսական եվրասիականությունից, որի հայեցակարգերի մշակման գործում մեծ դերակատարում ունեն Ն.Ս. Տրուբեցկին, Պ.Ն. Սավիցկին, Գ.Վ. Ֆլորովսկին: Վերջիններս համարում էին, որ Ռուսաստանն իր պատմամշակութային յուրահատկությամբ կարող է լինել Եվրասիայի կորիզը՝ շեշտը դնելով ասիա-թուրքական աշխարհի միության վրա, ինչն, իր հերթին, պետք է հանդես գա ընդդեմ Արևմուտքի: Մեր օրերում այս գաղափարախոսությունը զարգացրեց Ա.Դուգինը: Սակայն թուրքական եվրասիականությունը ներկայումս այլ միտումներ ունի:

Թուրքական ծագումով ամերիկացի հետազոտող Սեներ Աքթյուրքը, ուսումնասիրելով թուրքական եվրասիականության երևույթը, համարում է, որ այն նպատակ ունի հաշտեցնել նախկին կայսրությունները՝ Թուրքիան և Ռուսաստանը: Ըստ հեղինակի, թուրքական եվրասիականությունը պանթյուրքիզմի, նեոսամանիզմի հետ միասին դարձել է ժամանակակից թուրքական ինտելեկտուալ լանդշաֆտի ինքնագիտակցության բաղադրամասերից մեկը: Հեղինակի բնորոշմամբ՝ թուրքական եվրասիականության կառուցվածքային առանձնահատկության մեջ գլխավորը Ռուսաստանի և Թուրքիայի պայքարն է ընդդեմ Արևմուտքի: Այդ պայքարի արդյունքում պետք է ստեղծվի Եվրասիական միավորում սլավոնական և թյուրքական ժողովուրդներից: Ստացվում է, որ թուրքական եվրասիականությունն արևմտյան գերիշխանությանը հակակշռող նախագիծ է¹³:

Փորձագիտական հանրությունում թուրքական եվրասիականության շուրջ բազմակարծությունը ոչ միայն չի բացահայտում այս գաղափարախոսության բուն էությունը, այլև խճճում է տեսակետներն ու բարդացնում կանխատեսումները: Այդուհանդերձ, թուրքական եվրասիականությունն ունի մի քանի ուղղություն, որոնց շուրջ մոտեցումները թուրքական տարբեր կուսակցություններում տարբեր կերպ են արտահայտվում: Այս ամենի հետևանքով քաղաքական ուժերի միջև առաջանում են տարաձայնություններ՝ խոչընդոտելով այդ մոտեցումների շուրջ ընդհանուր տրամաբանության առաջացմանը:

ԱԶԿ իշխող կուսակցություն. - Եվրասիականության որոշ դրույթներ արժանանում են նեոսամանների հավանությանը, մոտեցումները, սակայն, խիստ տարբերվում են մյուսներից: Այս մոտեցման «առաջամարտիկը» կրկին Ա.Դավութօղլուն է, որն Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի (*Diş Ekonomik İlişkiler Kurulu (DEİK)*) անցկացրած Թուրք-Եվրասիա գոր-

¹³ *Sener Akturk*, “Counter-Hegemonic Visions and Reconciliation through the Past: The Case of Turkish Eurasianism”, *Ab Imperio*, 2004/4, pp. 207-238.

ծարար համագործակցության հավաքույթին (2010թ. փետրվարի 5)) բացահայտեց իր տեսլականը Եվրասիա շարժվելու ճանապարհին: Դավութոյուն առաջարկում է ստեղծել Եվրասիական միություն, որն ունակ կլինի հիմնել տնտեսական հզոր դաշտ: Ըստ նրա՝ Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին պետք է դառնա Միջին և Արևելյան Ասիաները կապող օղակը: Իսլամաբադից մինչև Ստամբուլ ձգվող երկաթուղին՝ արևելք-արևմուտք հատող խաչմերուկը, հաղորդակցման լայն հնարավորություններ է տալու տարածաշրջանի տնտեսական համագործակցությանը¹⁴:

Թուրք վերլուծաբանները կարծում են, որ Եվրասիական միության «ստեղծումը» մարտահրավեր է՝ ուղղված Եվրամիությանը: Իրականում ինչ զարգացումներ կլինեն այս ուղղությամբ՝ դեռևս հայտնի չէ, քանի որ ասիական երկրների կողմից Եվրասիական միություն ստեղծելու հստակ արձագանքներ չկան: Դավութոյունի հայտարարությունը կարող է նաև մեկ այլ ենթատեքստ ունենալ. նման առաջարկով հանդես գալը կարելի է դիտել նաև Եվրամիությանն այլընտրանքային կառույցի ձևավորման փորձ՝ Թուրքիայի եվրահիստեգրման հավանական ձախողման ֆոնին:

Ազգայնական ուժեր.՝ Ուլտրազգայնական և աջ կենտրոնամետ քաղաքական, զինվորական ուժերը գտնում են, որ եվրասիականության հիմնական նպատակը պետք է լինի Անդրկովկասի և Միջին Ասիայի թյուրքական պետությունների հետ սերտ հարաբերությունների հաստատումը: Սա էլ, իր հերթին, հիմք կդառնա հետագայում դեպի այդ տարածաշրջաններ Թուրքիայի քաղաքական և քաղաքակրթական առաջխաղացման համար: Կարճ ասած՝ ազգայնական ուժերի շրջանակում թուրքական եվրասիականության ելակետային դրույթները հիմնվում են թյուրքիզմի գաղափարի վրա և որևէ նոր բան չեն առաջարկում: Անշուշտ, խոսքը ոչ թե եվրասիական (տնտեսական և այլն), այլ թյուրքական միության մասին է:

Լիբերալ ուժեր.՝ Ազատական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերի¹⁵ կարծիքով՝ գաղափարախոսության առանցքը Թուրքիան Եվրոպայի և Ասիայի միջև կամրջի վերածելն է, որը կհանգեցնի ընդհանուր տնտեսական դաշտի ստեղծմանը:

Քեմալական ուժեր.՝ Քեմալականները բավական հետաքրքիր ձևակերպումներ ունեն, ինչի արդյունքում այս գաղափարախոսության մեջ առաջացել է նոր ենթաուղղություն՝ քեմալական եվրասիականություն: Քեմալական եվրասիականությունը կտրուկ շրջադարձ է կատարում արևմտյան արժեքներից, ինչն արդեն իսկ շեղում է Քեմալ Աթաթուրքի դրույթներից, և հայացքն ուղղում է դեպի արևելք:

¹⁴ İbrahim Karagül, Davutoğlu, Avrasya Birliği, 'kaos kuşağı', Yeni Şafak, 05.02. 2010.

¹⁵ Նման մտուցումներ ունեն Դեմոկրատական կուսակցության (*Demokrat Partisi*) ներկայացուցիչները և ազատական կողմնորոշում ունեցող քաղաքական այլ ուժեր:

Այս ուղղության ներկայացուցիչները կարևոր են համարում ստեղծել «Մեծ Եվրասիական տարածություն», որի կազմում կարող են մտնել Չինաստանը, Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը¹⁶, իսկ դա հեռանկարում կարող է նպաստել նոր ռազմական միության ստեղծմանը, որն, անշուշտ, ուղղված կլինի ԱՄՆ-ի դեմ: Այս ուղղությունն անհրաժեշտ հավանության չի արժանանում նվիրյալ քեմալականների կողմից և աստիճանաբար պառակտում է վերջիններիս շարքերը:

Վերջին մի քանի ամիսներին թուրքական իշխանությունների հրահանգով բանակի բարձրաստիճան զինվորականների ձերբակալությունները մասամբ նպատակային քաղաքականություն էին՝ հականեոսմանականների և ուլտրազգայնականների դեմ, մյուս կողմից՝ նաև ներկայիս հիմնական ընդդիմադիր ուժին՝ ԺՀԿ-ին թուլացնելու նախաձեռնություն, որոնց սատարում են վերջինները:

Եվրասիականության գաղափարը, փաստորեն, ներքաշել է Թուրքիայի տարբեր գաղափարախոսություններ ունեցող կուսակցությունների՝ ինչպես «չափավոր իսլամիստների», այնպես էլ ձախ ընդդիմադիրների՝ մարքսիստ-սոցիալիստների (*Türkiye İşçi Partisi* - Թուրքիայի բանվորական կուսակցությունը սերտ հարաբերություններ ունի Եվրասիական շարժման ռուս ակտիվիստների հետ¹⁷ և բավական մեծ աջակցություն է ստանում ԱՄՆ-ից), անգամ ազգային և դավանական փոքրամասնությունների (ալևիներ):

Միևնույն ժամանակ, այս գործընթացներով հետաքրքրված են նաև Թուրքիայի բարձրաստիճան զինվորականությունը, որոշ ինտելեկտուալ շրջանակներ («ուղեղային կենտրոնների» առավել ընդգծված ներկայացուցիչներ՝ Ալի Շահին¹⁸, Սուլեյման Շենսոյ¹⁹): Ընդ որում, գլխավոր երեք գաղափարախոսություններն անհրաժեշտ մակարդակով քարոզվում են հասարակու-

¹⁶ Эмель Акчали, Мехмет Перинчек, «Кемалистское евразийство: новый политический дискурс в Турции», <http://www.warandpeace.ru/ru/analysis/view/42088/>.

¹⁷ Թուրքիայի բանվորական կուսակցության ղեկավար Դոդու Փերինչեքը, որը ձերբակալվեց «Էրգենեքոնի» գործով, Եվրասիական շարժման անդամ է և ամուր կապեր ունի այս շարժման հիմնարար ներկայացուցիչ Ա.Դուզինի հետ:

¹⁸ Ալի Շահինը 2004թ. հիմնադրված Հարավային Ասիայի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (*Güney Stratejik Araştırmalar Merkezi*) նախագահն է: Կենտրոնն ուսումնասիրում է այդ տարածաշրջանի երկրներին առնչվող բոլոր ոլորտները:

¹⁹ Սուլեյման Շենսոյը ղեկավարում է մեծ հեղինակություն ունեցող Թուրք-ասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (*Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi*): 2010թ. փետրվարին այս կենտրոնում անց է կացվել Ասիական երկրների համագործակցության և անվտանգության թեմայով կոնֆերանս, որտեղ քննարկվել է 21-րդ դարում Ասիայի տնտեսական և քաղաքական դերի հարցը: Թուրքիայում ասիական երկրների դեսպանների մասնակցությամբ (Ռուսաստան, Չինաստան, Աֆղանստան, Ճապոնիա և Միջին Ասիայի երկրներ) իրականացված երրորդ կոնֆերանսն է, որտեղ քննարկվել է Եվրասիայի աշխարհաքաղաքականության հնարավորությունների հարցը՝ հեռանկարում ունենալով Թուրքիայի հետ համագործակցությունը:

թյունում, որի համար առավել արդյունավետ քարոզչական լծակ են ծառայում Թուրքիայի «ուղեղային կենտրոնները», պետական համալսարանները:

Պատահական չէ, որ ս.թ. մարտի 2-3-ը Անկարայի համալսարանում անցկացվեց եվրասիական սիմպոզիում, որին մասնակցեցին Թուրքիայի հայտնի գիտնականներ, հետազոտական կենտրոնների ներկայացուցիչներ, քաղաքական գործիչներ, զինվորական և պետական ծառայողներ: Օրակարգում հետևյալ հարցերն էին. եվրասիականությունը որպես Թուրքիայի ներկայիս արտաքին քաղաքականության ուղղություն, Եվրասիայի ռազմավարական նշանակությունը, տարածաշրջանին առնչվող անվտանգության խնդիրները, տնտեսական զարգացման և համաշխարհային ճգնաժամից դուրս գալու ելքերը, այդ թվում՝ եվրասիական քաղաքակրթության պատմության և այլ հարցերի շուրջ, որոնք առ այսօր դուրս են մնացել թուրք մտավորականների տեսադաշտից:

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԹՈՒՐՔ-ԱԴՐԲԵՉԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ

*Հայկարամ Նահապետյան**

Միացյալ Նահանգների պետական քաղաքականության մշակման, փորձագիտական և տեղեկատվական դաշտի ձևավորման հարցում մեծ դեր է հատկացվում վերլուծական կազմակերպություններին՝ *think tank*-երին:

Վաշինգտոնում են գործում «Քարնեգի» (*Carnegie endowment foundation*), Բրուքինգս (*Brookings institute*), Հերիթիջ (*Heritage foundation*), Ջոն Հոփկինզի համալսարան (*John Hopkins university-SAIS*), Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն (*CSIS-Center for Strategic and International studies*), Վուդրո Վիլսոն կենտրոն (*Woodrow Wilson Center*), Արտաքին հարաբերությունների խորհուրդ (*Council of Foreign Relations*), Ատլանտյան խորհուրդ (*Atlantic Council*) և այլ վերլուծական կառույցներ: Մեծ թվով վերլուծական հաստատություններ են տեղակայված նաև ԱՄՆ այլ նահանգներում: Ընդ որում, որպես կանոն, տարբեր ամերիկյան վարչակարգեր առավել սերտ կապեր են պահպանում տարբեր թինկ-թանկերի հետ, մասնավորապես Ջորջ Բուշ կրտսերի նախագահության շրջանում ամերիկյան քաղաքական դեկավարությանը մոտ էր «Հերիթիջ» հիմնադրամը, որն ընդհանրապես հայտնի է որպես ԱՄՆ նեոպահպանողական (*neo-conservatism* կամ *neocon*) ուժերին առավել մոտ վերլուծական հաստատություն: Ներկայում «Հերիթիջ» հիմնադրամի կողմից շրջանառվող վերլուծական և քարոզչական մշակումները կրում են ընդդիմադիր բնույթ և դատապարտում գործող վարչակարգին արտաքին քաղաքականության կամ առողջապահական ասպարեզում բարեփոխումների համար:

Գործող դեմոկրատական վարչակարգին առավել մոտ է «Բրուքինգս» հաստատությունը, որն ավանդաբար Դեմոկրատական կուսակցության հետ առավել սերտ աշխատող վերլուծական մարմին է:

Թուրքիայում, վերջին ժամանակաշրջանում՝ նաև Ադրբեջանում աստիճանաբար ավելի հստակ է ընկալվում թինկ-թանկերի դերի կարևորությունը ԱՄՆ քաղաքական մշակույթի մեջ: Տարեցտարի, թերևս, չափազանցություն չի

* ԱՄՆ-ում Հայաստանի Հանրային հեռուստատեսության թղթակից:

լինի ասել, որ վերջին շրջանում՝ ամսեամիս նշված երկրներն առավել որոշակի են աշխատում վաշինգտոնյան վերլուծական հաստատություններում իրենց ներկայությունն ապահովելու և ակտիվանալու ուղղությամբ:

Վաշինգտոնում տեղակայված թինկ-թանկերի հետ նշված պետությունների, մասնավորապես՝ Թուրքիայի աշխատանքն իրականացվում է 2 հիմնական տարբերակով. ա. ամերիկյան «թինկ-թանկերի» հետ համաձայնագրով նշված հաստատություններում աշխատանքի են անցնում ազգությամբ թուրք վերլուծաբաններ: Այսպիսով, էթնիկ թուրք աշխատակիցները հնարավորություն են ստանում օգտագործել ամերիկյան կազմակերպության անվանումը՝ «բրենդը», իսկ սեփական վերլուծական աշխատանքում մնալ համեմատաբար անկախ կարգավիճակում՝ աշխատելով թուրքական կողմի հետաքրքրությունների համապատկերում: ԱՄՆ մայրաքաղաքի վերլուծական կառույցներում աշխատող էթնիկ թուրք փորձագետներից են.

CSIS Բյուլենթ Ալիոզա, Նեսիլհան Քափթանօղլու, Սեդա Չիֆթչի:

CSIS-ում նաև գործում է առանձին հետազոտական խումբ Թուրքիայի ուղղությամբ, որի կազմում, բացի վերոնշյալ անձանցից, մտնում են նաև 2 ոչ էթնիկ թուրք վերլուծաբաններ: *CSIS*-ի կայքում Թուրքիայի վերաբերյալ հետազոտությունները ներկայացված են հատուկ առանձին բաժնով, որ կոչվում է “*Turkey Project*” (<http://csis.org/program/turkey-project>):

«Բրուքինգս» ինստիտուտ: Աշխատանքները ղեկավարում է Օմեր Թաշփընարը, Հաքան Ալթընայն աշխատակցում է Թուրքիայից:

«Բրուքինգսի» կայքում Թուրքիան վերստին ցուցադրված է առանձին բաժնով (<http://www.brookings.edu/topics/turkey.aspx>): Ըստ 2009թ. ապրիլի 14-ին հրապարակված տվյալների, «Բրուքինգս» հաստատությունը 2007թ. սկզբից մինչև 2009թ. ապրիլ Թուրքիայից ստացել է \$410 հազարի ֆինանսական «օգնություն»: Թուրքիայից «Բրուքինգսի» հաշվին գումար են հատկացրել. «Էքշիօղուլարը գրուփ» շինարարական ընկերությունը՝ 2 անգամ \$75 հազարական (05.03.2007թ. և 29.09.2007թ.), “*Hedef Alliance Holding*” դեղագործական ընկերությունը՝ \$30 հազար 17.01.2007թ., «Նուրօլ» ռազմարդյունաբերական ձեռնարկությունը՝ \$30 հազար (06.02.2008թ.) և Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միությունը (*TUSIAD*)՝ մեկ անգամ՝ \$50 հազար և 6 անգամ՝ \$25 հազարական (համապատասխանաբար 06.02.2009թ., 27.02.2009թ., 08.07.2009թ., 22.04.2008թ., 05.10.2007թ., 08.06.2007թ., 08.03.2007թ.):

Նշենք նաև, որ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան կայքում տեղակայված է տեղեկատվություն ԱՄՆ-ում գործող թինկ-թանկերի վերաբերյալ (http://turkey.usembassy.gov/think_tanks_in_the_u.s):

Միաժամանակ, վերջին շրջանում նկատելի է Վաշինգտոնում գուտ թուրքական վերլուծական հաստատությունների ծավալման միտումը: Որպես նրա հիմնական պատճառներ են նշվում.

ա. Թուրքական համայնքներում առկա են ուժեր, որոնք վերահսկելի չեն Թուրքիայի կառավարության կողմից: Հատկապես Արևմուտքում ձևավորվել են Թուրքիայի աշխարհիկ-ռազմական թևին հարող հասարակական-լոբբիստական խմբեր, նաև սուֆիզմին մոտ կանգնած որոշակի բջիջներ՝ «նուրչուլար», որոնք հարում են վտարանդի գործիչ Ֆեթհուլահ Գյուլենին: Այսպիսով, թուրքական կառավարությունը կարող է դժվարություններ ունենալ արտերկրում լոբբիինգի կազմակերպման առումով և, միաժամանակ, սեփական ներկայությունն արտասահմանյան համայնքներում ուժեղացնելու անհրաժեշտություն ունի:

բ. Թուրքիա-ԱՄՆ և հատկապես Թուրքիա-Իսրայել հարաբերություններում նկատվող որոշակի լարումները վտանգ են ստեղծում, թե մասնավորապես ամերիկյան թինկ-թանկերի միջոցով Թուրքիայի դիրքորոշումներն առաջ մղելու նախկին մարտավարությունն ինչ-որ չափով կարող է կորցնել կենսունակությունը: Հրեական լոբբին գզալի ազդեցություն ունի թինկ-թանկերում, շոշափելի թիվ են կազմում դրանցում աշխատող էթնիկ հրեա փորձագետները, որոնց մեկ մասը մասնագիտանում է Թուրքիայի ուղղությամբ և արդեն իսկ հանդես է եկել Թուրքիայի հասցեին որոշակի քննադատությամբ (Արիել Կոհեն, Հենրի Բերքի և այլն):

Այսպիսով, առաջ է գալիս ուղղակիորեն սեփական հաստատությունները Վաշինգտոնում հիմնելու անհրաժեշտությունը:

Խոսքն առաջնահերթ վերաբերում է *SETA DC* հաստատությանը (<http://www.setadc.org>): Այն գործում է 2009թ. տարեսկզբից Վաշինգտոնի կենտրոնական Քոնգրեսի պողոտայում: *SETA-DC*-ը Անկարայում 2006-ից գործող *SETA (Siyasi, Ekonomik, Toplum Araştırmaları Vakfi)* վերլուծական հաստատության մասնաճյուղն է ԱՄՆ մայրաքաղաքում: «Վիկիպեդիա» շտեմարանը *SETA*-ն բնորոշում է որպես «կառավարամետ» (http://en.wikipedia.org/wiki/Turkish_think_tanks): Հատկանշական է, որ *SETA*-ի հիմնադիր և առաջին տնօրեն Իբրահիմ Քալընը 2009թ. գարնանից վարչապետ Էրդողանի արտաքին քաղաքական հարցերով խորհրդականն է և միաժամանակ շարունակում է պաշտոնավարել *SETA*-ում՝ որպես վերլուծաբան (http://www.setadc.org/index.php?option=com_content&view=section&layout=blog&id=9&Itemid=99): Այս և մեծ թվով այլ փաստեր վկայում են, որ *SETA DC*-ն Վաշինգտոնում հաստատվել է թուրքական կառավարության պետական ծրագրի համաձայն: Ամերիկյան մասնաճյուղի ղեկավարն է Նուհ Յըլմազը: Կառույցը կազմակերպում է կլոր սեղաններ, հանդիպումներ, ԱՄՆ-ում տարածում *“Insight Turkey”* անգլիալեզու վերլուծական հանդեսը, որը լույս է տեսնում Անկարայում *SETA*-ի ուժերով: Մասնավորապես, մայիսի 7-ին տեղի ունեցան «Բազմաձևակալության

կուլտուրան Արդարություն և զարգացում կուսակցության օրոք», ապրիլի 30-ին՝ «Ալևիներին ընդառաջ և ժողովրդավարացման գործընթացը Թուրքիայում», փետրվարի 17-ին՝ «Գործընկերության մոդել. ստեղծագործ մոտեցում թուրք-ամերիկյան հարաբերություններին» խորհրդաժողովները: Չուտ խորագրերից հետևում է, որ կառույցի նպատակներից մեկը Թուրքիայի գործող վարչակարգի PR-ն է:

Ներկայում «ավագ եղբոր» օրինակին է հետևում նաև Ադրբեջանը: 2010թ. ապրիլի 28-ին հայտնի դարձավ, որ Վաշինգտոնում աշխատանքներն է սկսել Ադրբեջանական հետազոտությունների վաշինգտոնյան կենտրոն կազմակերպությունը: Ապրիլի 27-ին այն կազմակերպել էր իր առաջին ձեռնարկը. Միջազգային հարաբերությունների Էլիոթի դպրոցում տեղի ունեցավ խորհրդաժողով «Կասպյան էներգետիկայի աշխարհաքաղաքականությունը. հեռանկարներ և մարտահրավերներ թեմայով»: Ադրբեջանական թինկ-թանկի կազմավորման թեման լուսաբանվել է ՀՀ ՋԼՄ-ում, առանձին հրատարակությամբ է հանդես եկել «Նորավանք» գիտակրթական կենտրոնը:

Այսպիսով, միանշանակ է, որ Թուրքիան և Ադրբեջանն աճող հետաքրքրություն են ցուցաբերում ԱՄՆ մայրաքաղաքում թինկ-թանկերի շրջանակներում ծավալվելու, այսօրինակ մեխանիզմներով ամերիկյան քաղաքագիտական-փորձագիտական մտքի հանդեպ որոշակի ազդեցություն շահելու և սեփական շահերին համահունչ ուղղորդումներ տալու նկատմամբ: Նպատակներից մեկն, անկասկած, հայկական լոբբիստական կառույցներին հետևյալ կերպ դիմագրավելն է: Կասկածից վեր է, որ հատկապես ադրբեջանական կողմի ձեռնարկները կունենան ակտիվ հակահայ թեքումներ: Հաշվի առնելով նաև, որ հայկական սփյուռքի աշխատանքները հիմնականում չեն շոշափում վերլուծական ինստիտուտների ասպարեզը, այս ուղղությամբ որոշակի քայլերի ձեռնարկումը նպատակահարմար է թվում: Կարևոր է նաև նշել, որ ըստ ԱՄՆ-ում գործող օրենսդրության, արտասահմանյան թինկ-թանկն իրավասու է զբաղվել լոբբիստական գործունեությամբ:

ԱՄՆ ԵՎ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

*Տիգրան Ղանալանյան**

Տասնամյակների ընթացքում Սփյուռքում Հայ բողոքական զանազան համայնքներ են ձևավորվել: Դրանց թվում կարևոր տեղ են զբաղեցնում ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական համայնքները: Այս համայնքները կարևոր դերակատարություն ունեն ԱՄՆ-ի և Կանադայի հայության կյանքում ընդհանրապես և հոգևոր, կրթական, մշակութային, հասարակական ոլորտներում՝ մասնավորապես:

ԱՄՆ և Կանադայի հայ բողոքական եկեղեցիներն ընդգրկված են Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական միության (*Armenian Evangelical Union of North America*) մեջ: Այս միությունը հիմնադրվել է 1971թ. Դեբրոյթ քաղաքում: Հյուսիսային Ամերիկայում ցրված Հայ Ավետարանական եկեղեցիները դեռևս 20-րդ դարի սկզբին ստեղծել էին 2 միություն: 1901թ. կազմավորվեց ԱՄՆ Արևելյան նահանգների միությունը (որը ներառում էր նաև Կանադայի հայ ավետարանականներին), իսկ 1908թ.՝ Կալիֆորնիայի Հայ ավետարանական միությունը: Մակայն հետագայում առավել կազմակերպված գործելու հրամայականը հարկադրեց այս միություններին միավորվել և ստեղծել Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միությունը, որը ներառում է ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ Կանադայի տարածքում գործող Հայ Ավետարանական եկեղեցիները:

Հյուսիսային Ամերիկայի Հայ ավետարանական միության կենտրոնը գտնվում է Գլենդելում, հովիվն է (գործադիր տնօրենը) Հովսեփ Մաթոսյանը: Վերջինս այս պաշտոնում ընտրվել է 2004թ., իսկ 2008թ. վերընտրվել չորս տարի ժամկետով¹: Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միությունն ունի առաջնակարգ նշանակություն մայրցամաքի հայ ավետարանականներին համախմբելու և նրանց բնականոն կենսագործունեությունն ապահովելու գործում:

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

¹ *Տե՛ր Սարգիսեան-Գրիգորեան Ն.*, Հայ ավետարանական համայնք. Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական միության գործունեությունը - http://www.chanitz.org/2008/12/blog-post_18.html

ԱՄՆ հայ բողոքական համայնքը

ԱՄՆ տարածքում հայերը սկսել են հաստատվել դեռևս 17-րդ դարից, իսկ ԱՄՆ հայկական համայնքը ձևավորվել է 1870-ական թթ. վերջերին: Այնուհետև համայնքը զգալիորեն ստվարացել է Օսմանյան կայսրությունում համիդյան կոտորածների, ապա՝ Ցեղասպանության հետևանքով: Այժմ ԱՄՆ-ում բնակվող հայերի թիվը հասնում է մոտ 1 մլն 270 հազարի², որոնց թվում հայ ավետարանականների թիվը հաշվվում է մոտ 25 հազար³: Սակայն նրանց կատարած դերը ԱՄՆ հայ համայնքի կյանքում շատ մեծ է թվաքանակի համեմատ: «Փոքր, բայց ուժեղ - Հայկական բողոքական համայնք». Հայ բողոքականների համայնքը, համաձայն տարածված կարծիքի, համարվում է ԱՄՆ սփյուռքի ամենահին եւ աչքի ընկնող մասերից մեկը⁴: Այս ձևակերպումը բնութագրում է ԱՄՆ հայ բողոքական համայնքի արժեքը, կատարած դերը և ունեցած ներուժը: ԱՄՆ հայ բողոքականներն իրենց առանձնահատկություններով հանդերձ հանդիսանում են ԱՄՆ հայ համայնքի անբաժանելի մասը: ԱՄՆ Հայ Ավետարանական եկեղեցիներն ունեն կարևոր կազմակերպչական նշանակություն: Այս երկրում հայ համայնքի բնականոն գործունեության կազմակերպման, հայկական տարատեսակ քաղաքակրթական գործոնների հանդես գալու առումով ԱՄՆ Հայ բողոքական համայնքը կատարում է կարևոր դեր: ԱՄՆ հայկական բազմազան կազմակերպությունների (եկեղեցական կառույցներ, քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, հայրենակցական միություններ, զանազան ընկերակցություններ ու միություններ և այլն) թվում Հայ Ավետարանական եկեղեցին զբաղեցնում է ուրույն և անփոխարինելի տեղ:

ԱՄՆ-ում հայ ավետարանականները հաստատվել են 19-րդ դարում, 20-րդ դարի սկզբին կազմակերպել են իրենց առաջին միությունները: Սկսած այդ ժամանակներից՝ հայ ավետարանականները ստանձնեցին կարևոր դերակատարում ԱՄՆ հայ համայնքի կյանքում: ԱՄՆ-ում հայ ավետարանականները ծավալեցին եկեղեցական, կրթական, մշակութային, ընկերային, հասարակական բոլոր գործունեություն: ԱՄՆ Հայ Ավետարանական եկեղեցու կառույցը բաղկացած է եկեղեցիներից, միախոնրական, եկեղեցական ընկերություններից և զանազան այլ կազմակերպություններից:

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից հրատարակվող *AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide*-ի տվյալների համա-

² Մայիսյան Մ., Հայերն աշխարհում, Երևան, 2007, էջ 94:

³ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 47; Հայերն աշխարհում, հանրագիտական համառոտ բառարան, Երևան, 1995, էջ 21:

⁴ Մասունյան Հ., Ամերիկահայ կառույցներ, «Ազգ», 23.12.2006 - <http://www.azg.am/AM/2006122325>

ձայն, այսօր ԱՄՆ-ում գործում են 26 Հայ Ավետարանական եկեղեցիներ, որոնցից 14-ը՝ Կալիֆորնիայի նահանգում: Հայ Ավետարանական եկեղեցիների թվով երկրորդ տեղում Մասաչուսեթսի նահանգն է, որտեղ գործում են 3 Հայ Ավետարանական եկեղեցիներ: Նյու Յորքի նահանգում կան 2 Հայ Ավետարանական եկեղեցիներ: Իլինոյսի, Միչիգանի, Նյու Ջերսիի, Նևադայի, Նյու Հեմփշիրի, Փենսիլվանիայի, Ռոդ Այլենդի, Յուտայի նահանգներում գործում են մեկական Հայ Ավետարանական եկեղեցիներ: Բացի Հայ Ավետարանական եկեղեցիներից, գործում են նաև հինգ Հայ ավետարանական եղբայրություններ (ընկերակցություններ)⁵:

Բարեգործական և կրթական ակտիվ գործունեություն է ծավալում 1918թ. հունիսի 7-ին, Մասաչուսեթս նահանգի Ուստր քաղաքում ստեղծված Հայ Ավետարանական եկեղեցիների ավետարանչական գործունեության կազմակերպիչ և գործադիր մարմինը՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերությունը (ՀԱԸ): ՀԱԸ-ն մասնաճյուղեր և գրասենյակներ ունի աշխարհի մոտ 20 երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում (1991 թվականից) և ԼՂՀ-ում (1995 թվականից): ՀԱԸ-ն ծրագրերը ՀՀ-ում և Արցախում իրականացնում է Ֆրանսիայի «Հույս Հայաստանի համար» կազմակերպության հետ համատեղ: Ծրագրերն ունեն երկու ուղղվածություն՝ բարեգործական և կրթական: ՀԱԸ կարևոր խնդիրներից են 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժից տուժած շրջանների վերականգնմանն աջակցելը, գոհված ազատամարտիկների և ծնողազուրկ երեխաների խնամակալությունը, աճող սերնդի քրիստոնեական դաստիարակությունը, բժշկական ծառայություններ մատուցելը, ինչպես նաև գյուղատնտեսության, շինարարության, կրթության բնագավառներում հայկական երկու պետություններին աջակցելը⁶: «Մասնագետներից շատերն են համաձայն, որ իր երկար պատմության շնորհիվ այս խմբավորումն ունի ֆինանսական հզոր բազա և բարձր մակարդակի արհեստավարժ աշխատողներ Ս. Նահանգներում»⁷:

Օրինաչափ կարելի է համարել այն հանգամանքը, որ Նյու Ջերսիում է գտնվում Հայ Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը: Սա վկայում է այն մասին, որ ԱՄՆ հայ բողոքական համայնքը կարևոր տեղ է զբաղեցնում հայ բողոքական իրականության մեջ: Խորհուրդն ունի գործադիր մարմին, որի հրավիրած ժողովներին մասնակցում են Հայ ավետարանական հինգ միությունների (Մերձավոր Արևելք, Ֆրանսիա, Եվրասիա, Հայաստան, Հյուսիսային Ամերիկա), Հայ ավետարանչական ընկերակցության ներկայա-

⁵ AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 17-19. <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

⁶ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 703:

⁷ Մասունյան Հ., Ամերիկահայ կառույցներ, «Ազգ», 23.12.2006 - <http://www.azg.am/AM/2006122325>

ցուցիչները: Ժողովների ընթացքում քննարկվում են Հայ Ավետարանական եկեղեցիների գործունեությանը, հայապահպանությանը վերաբերող հարցեր: Ժողովի ընթացքում խորհուրդն ընտրում է դիվանի կազմը՝ նախագահ, փոխնախագահ, քարտուղար, գանձապահ և գործադիր տնօրեն⁸:

Հայ Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը ևս ձգտում է բնականոն հարաբերություններ հաստատել ու ակտիվորեն համագործակցել ինչպես Հայ Առաքելական եկեղեցու, այնպես էլ Հայաստանի Հանրապետության հետ: Սրա հաստատումն է 2001թ. օգոստոսին տեղի ունեցած Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի գործադիր հանձնախմբի ժողովի անցկացումը Հայաստանում: Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի հատուկ պատվիրակությունն այցելեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին՝ ավելի մերձեցնելու Մայր եկեղեցու և Հայ Ավետարանական եկեղեցու փոխհարաբերությունները, իսկ խորհրդի կազմի և ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանի հանդիպման ընթացքում շոշափվեցին հարցեր արտագաղթի և ժողովրդի սոցիալական դժվարին կացության վերաբերյալ⁹:

Անփոխարինելի նշանակություն ունեն ԱՄՆ հայ ավետարանականների կապերը Հայաստանի հետ: Այս համագործակցությունը նպաստում է ինչպես հայ ավետարանականների և հայ առաքելականների փոխգործակցությանը, այնպես էլ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Այս առումով հատկանշական է ԱՄՆ Հայ ավետարանական համայնքի ներկայացուցիչների համագործակցությունը ՀՀ Սփյուռքի նախարարության հետ: Այս համագործակցության շրջանակներում կարևորվում է ՀՀ-ԼՂՀ-Սփյուռք կապերն ամրապնդելուն ուղղված միասնական գործողությունների իրականացումը: ԱՄՆ-ում գործող հայ բողոքական համայնքի առջև ծառայած խնդիրները, անշուշտ, ունենալով դավանանքային ուրույն երանգավորում, կազմում են բովանդակ Սփյուռքի և համայն Հայության հիմնախնդիրների բաղկացուցիչ մասը:

ԱՄՆ հայ ավետարանականներն անմասն չեն մնում այդ երկրում, ինչպես նաև ամբողջ աշխարհում կատարվող իրադարձություններից: Վերջինիս ապացույց պետք է համարել Ամերիկայի հայ ավետարանական ընկերակցության կողմից Հաիթիի երկրաշարժից տուժածներին օգնություն ցույց տալը¹⁰:

⁸ Հայ Ավետարանական եկեղեցիների Համաշխարհային խորհրդի գործադիր մարմնի հերթական ժողովը (17 հոկտեմբեր 2008) - <http://www.azad-hye.net/media/r1/armenian-evangelical-world-council.htm>

⁹ *Բաղայան Մ.*, Հայ ավետարանական համաշխարհային խորհուրդը Հայաստանում, «Ազգ», 25.08.2001 - <http://www.azg.am/AM/2001082516>

¹⁰ Armenian Evangelicals praised for Haiti relief efforts - <http://www.reporter.am/go/article/2010-03-02-armenian-evangelicals-praised-for-haiti-relief-efforts>

Մա վկայում է ԱՄՆ հայ ավետարանականների քրիստոնեական, մարդասիրական արժեքներով առաջնորդվելու մասին: Այսպիսով, կարելի է նշել, որ ԱՄՆ Հայ ավետարանականների ծավալած գործունեությունը չի սահմանափակվում միայն հայ իրականությամբ: Մա հնարավորություն է տալիս ԱՄՆ հայ բողոքականներին մաս կազմելու բողոքական քաղաքակրթական համակարգին: Այս համատեքստում հարկ է կարևորել համաշխարհային և ազգային արժեքների համադրումը և փոխլրացումը: Մրա շնորհիվ հզորանում է հայ բողոքականների գործունե հայկական քաղաքակրթությունում, ինչն իր հերթին նպաստում է հայկական գործունի ամրապնդմանն աշխարհում:

ԱՄՆ հայ ավետարանական համայնքի կյանքում կարևոր դերակատարություն ունեն հայ ավետարանական կրթական հաստատությունները:

Շառլոթ և Էլիզ Մերտինյան հայ ավետարանական ամենօրյա վարժարանը հիմնվել է 1982թ. Շերման Օքսում՝ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության, Հյուսիսային Ամերիկայի հայ ավետարանական միության նախաձեռնությամբ և հովանավորությամբ: Ունի մանկապարտեզ, տարրական և միջին բաժիններ, երգչախումբ, մարզական խմբեր: Ուսուցանվում են հայոց լեզու, պատմություն, կրոն, երաժշտություն, արվեստ: Աշակերտների թիվը՝ մոտ 250: Հրատարակում է «Շողեր և հեռանկարներ» տարեգիրքը: Տնօրենն է Հովսեփ Ինճեճիկյանը: Իսկ Սահակ-Մեսրոպ Հայկական Քրիստոնեական դպրոցը գտնվում է Ալտադենայում: Դպրոցի տնօրենն է Շահե Գարաբեդյանը: Կրթական բարձր մակարդակի կողքին առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հայեցի և քրիստոնեական դաստիարակությանը:

20-րդ դարի սկզբից հայ ավետարանականներն ԱՄՆ-ում ունեն իրենց պարբերական մամուլը: Հենց այս շրջանում հայ ավետարանական մամուլի ի հայտ գալը ԱՄՆ-ում պայմանավորված էր այս երկրում Հայ ավետարանական համայնքի ուժեղացման, կազմակերպչական կառույցների ձևավորման հետ:

ԱՄՆ հայ ավետարանականները հրատարակել են «Կոչնակ» (1900-1960թթ., Բոստոն, Նյու Յորք), «Ջանասեր» (1916-1923թթ.), «Ավետագիր» (1945-1947թթ., Նյու Յորք) հանդեսները: Ներկայումս լույս են տեսնում Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության «Լրաբեր» (1965 թվականից, Նյու Ջերսի) ամսագիրը, Հյուսիսային Ամերիկայի Հայ Ավետարանական միության «Forum» (1975 թվականից) և «Ձեռք մեր հանապազօրդ», «AMAA» (*Armenian Missionary Association of America*) պարբերականները¹¹:

¹¹ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 50-51:

Կանադայի հայ բողոքական համայնքը

Կանադայում հայերը բնակություն են հաստատել 19-րդ դարի վերջին: Սակայն Կանադայի հայ համայնքը ձևավորվել է 1950-ական թթ.: Ներկայումս Կանադայում ապրում է շուրջ 81,5 հազար հայ¹²:

Կանադայի հայ համայնքի մաս են կազմում նաև հայ բողոքականները: Նրանց կազմակերպչական միավորներն են Հայ Ավետարանական չորս եկեղեցիները և Կանադայի Հայկական միսիոներական ասոցիացիան: Այստեղ Հայ Ավետարանական եկեղեցին, մեծաթիվ հետևորդներ չունենալով հանդերձ, այս պետության հայ համայնքի կարևոր կառույցներից է:

Այստեղ ևս հայ ավետարանականներն անմասն չեն մնում հայ համայնքի կյանքին մասնակցելուց, և այս առումով դավանանքային յուրահատկությունները լուրջ խոչընդոտ չեն հանդիսանում: Ընդհակառակը, Կանադայի հայ ավետարանական համայնքում արդիական են հայկական մշակութային, հասարակական-քաղաքական, ընկերային, կրթական այն նույն խնդիրները, ինչ Կանադայի մնացյալ հայության համար:

Կանադայի հայ ավետարանականության շրջանում արդիական են Հայության առջև ծառայած ազգային խնդիրները: Ասվածի օրինակ է 2005թ. հունիսի 10-ին Տորոնտոյում Չորյան ինստիտուտի կազմակերպած «Թուրքիայի Եվրամիությանն անդամակցության ու Հայաստանի հետ նրա հետագա հարաբերությունների մասին» պրոֆ. Ստեփան Աստուրյանի դասախոսությունը, որին օժանդակել է Հայ Ավետարանական եկեղեցին¹³:

Սա վկայում է այն մասին, որ Կանադայի հայ համայնքում հոգևոր-ընկերային գործունեություն ծավալելուց զատ Հայ Ավետարանական եկեղեցին բարձրաձայնում է հայոց ազգային հիմնահարցերը: Այս հանգամանքը կարևորվում է Հայության մյուս շերտերի հետ համատեղ հայ բողոքականների միասնական կենսագործունեություն ծավալելու համատեքստում:

1960թ. Տորոնտոյում հիմնադրվեց Հայ Ավետարանական եկեղեցին, որի ղեկավարն է վերապատվելի Սամվել Ալբարյանը: Մոնրեալում գործում են Հայ Ավետարանական երկու եկեղեցիներ՝ Հայ Ավետարանական եկեղեցին և Առաջին Հայ Ավետարանական եկեղեցին: Առաջին Հայ Ավետարանական եկեղեցու ղեկավարն է վերապատվելի Գեորգիս Դաբբոն, իսկ Հայ Ավետարանական եկեղեցունը՝ Ջոն Չարաֆյանը: 1979թ. Քեմբրիջում հիմնադրվեց Հայ Ավետարանական եկեղեցին: Սա Կանադայի չորրորդ Հայ Ավետարանական եկե-

¹² Կանադայի հայ համայնքը - <http://hayernaysor.am/newsday.php?p=0&c=0&t=0&r=0&year=2009-month=10&day=07&shownews=3812&LangID=4#3812>

¹³ *Օռլիկյան Հ.*, «Եվրոպական հանրաքվեները և հայ-թուրքական հարաբերությունները», «Ազգ», 06.07.2005 - <http://www.azg.am/AM/2005070601>

ղեցին էր, որն այժմ դեկավարում է վերապատվելի Հովհաննես Սարմազյանը: Բացի այս չորս եղեղեցիներից, Կանադայում գործում է ևս մի կարևոր հայ ավետարանական կառույց՝ Կանադայի Հայկական միսիոներական ասոցիացիան: Այն կարևոր դերակատարություն ունի Կանադայի Հայ Ավետարանական համայնքի կազմակերպչական խնդիրների լուծման, ընկերային-հասարակական, եկեղեցական, մշակութային կյանքի կազմակերպման մեջ: Կանադայի Հայկական միսիոներական ասոցիացիայի նախագահն է Դավիթ Թռունյանը, իսկ գործադիր տնօրենը՝ Միհրան Ջիզմեջյանը¹⁴:

Կանադայում հայ ավետարանականները ծավալում են նաև հրատարակչական գործունեություն: 1981 թվականից Մոնրեալի Հայ Ավետարանական եկեղեցին հրատարակում է «Լուսարձակ» եռամյա հանդեսը: Հանդեսում տպագրվում են գլխավորապես տեղական և միջազգային կրոնական, նաև հայկական մշակութային նորություններ¹⁵:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ԱՄՆ և Կանադայի Հայ բողոքական համայնքները կազմում են նշված պետությունների հայության անբաժան մասը: ԱՄՆ-ում և Կանադայում գործում են հայ ավետարանական մի շարք եկեղեցիներ, միսիոներական կազմակերպություններ, պարբերականներ: Հայ ավետարանական զանազան կազմակերպությունների բնականոն գործունեությունը համակարգում է Հյուսիսային Ամերկայի հայ ավետարանական միությունը: Հայ բողոքականները, ունենալով բազմաթիվ առանձնահատկություններ, այնուամենայնիվ, ակտիվորեն մասնակցում են տեղի հայության կյանքին: Նրանց գործունեությունը հաճախ դուրս է գալիս ներհամայնքային շրջանակներից և ընդգրկում բովանդակ Հայության սահմանները: Նրանք մեծ դեր են կատարում ԱՄՆ և Կանադայի հայ համայնքների եկեղեցական, ազգային, հասարակական, ընկերային, մշակութային կյանքի կազմակերպման ամենատարբեր բնագավառներում:

¹⁴ AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 9. <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

¹⁵ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 341:

ՄԻՐԻԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

*Վահրամ Հովյան**

Միրիայի հայ ավետարանական համայնքը տեղի Հայության դավանանքային երեք շերտերից մեկն է՝ հայ առաքելական և կաթողիկե համայնքների հետ միասին: Հայ ավետարանականների կազմակերպվածությունն ու ակտիվությունը հաշվի առնելով՝ հարկ է ուշադրություն դարձնել նրանց գործունեության վրա:

Միրիայի գլխավոր հայ ավետարանական համայնքը գտնվում է Հալեպում, որն ավանդաբար եղել է ամենահայառատ բնակավայրը Միրիայում: Լինելով Միրիայի ընդհանուր հայ համայնքի կենտրոնը կամ «մայրաքաղաքը»՝ Հալեպը միաժամանակ նաև հայ ավետարանական համայնքի կենտրոնը կամ «մայրաքաղաքն» է: Այստեղ է կենտրոնացված Միրիայի հայ ավետարանականների մեծ մասը: Համաձայն պաշտոնական տվյալների՝ Հալեպում նրանց թիվը կազմում է 4 հազ. մարդ: Սակայն ոչ պաշտոնական տվյալների համաձայն, այդ թիվը տատանվում է 2500-3000-ի սահմաններում: Այս քաղաքում է գտնվում հայ ավետարանականների հիմնական ղեկավար կառույցը՝ Հայ ավետարանական համայնքի գրասենյակը, որը գլխավորում է համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանը: Ներկայումս Հալեպն ինչ-որ իմաստով կարելի է համարել համաշխարհային հայ ավետարանականության կենտրոնը, քանի որ վերապատվելի Հարություն Սելիմյանը միաժամանակ նաև Հայ ավետարանական համաշխարհային խորհրդի նախագահն է: Բացի Հայ ավետարանական համայնքի գրասենյակից, Հալեպում է գտնվում նաև Միրիայի հայ ավետարանական եկեղեցիների, կրթական և այլ հաստատությունների մեծ մասը:

Հայ ավետարանական համայնքներ կան նաև Միրիայի այլ հայաշատ բնակավայրերում՝ մայրաքաղաք Դամասկոսում, Քեսապում, Հոմսում և այլուր:

Միրիայի հայ ավետարանական համայնքը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

- Այն աշխարհում առաջին հայ ավետարանական համայնքներից մեկն է և այդ իմաստով լինելով ամենահին համայնքներից մեկը՝ անցել է պատմական զարգացման որոշակի փուլեր:
- Ունի կազմակերպվածության բավական բարձր մակարդակ, ինչը թույլ է տալիս դրսևորել նշանակալի ակտիվություն: Դրա վառ արտահայտությունը նրա կազմակերպական կառույցների առատությունն է ու բազմազանությունը, որոնք տարբեր բնագավառներում ծավալում են ակտիվ գործունեություն:
- Մեկուսացված չէ հայ առաքելական և կաթողիկե համայնքներից, այլ նրանց հետ միասին կազմում է մեկ միասնական ամբողջություն՝ սիրիահայ համայնքը: Դրա լավագույն վկայություններն են.
 1. Ավետարանական կառույցների գործունեության տարածումը ողջ սիրիահայ համայնքում:
 2. Միջդավանական սերտ համագործակցությունը հայ առաքելական և կաթողիկե համայնքների հետ:

Պատմական ակնարկ

Ձևավորվելով 19-րդ դարի կեսին և լինելով առաջին հայ ավետարանական համայնքներից մեկը՝ Սիրիայի հայ ավետարանական համայնքն անցել է պատմական զարգացման որոշակի էվոլյուցիա: Այս համայնքի պատմությունը բաժանվում է երկու փուլի.

- *նախացեղասպանական՝ 19-րդ դարի կեսից մինչև Հայոց ցեղասպանությունը,*
 - *հետցեղասպանական՝ Հայոց ցեղասպանությունից մինչև մեր օրերը:*
1. *Նախացեղասպանական շրջան:* Սիրիայում հայ ավետարանական համայնքներ ձևավորվել են 19-րդ դարի կեսին, երբ այդ երկիրը մաս էր կազմում Օսմանյան կայսրության: Օսմանյան կայսրության Հայության շրջանում տարածում ստացող բողոքականությունն անմասն չթողեց նաև Սիրիայի հայերին, որոնք բնակվում էին հիմնականում Հալեպում և Քեսապում: Այստեղ էլ ձևավորվեցին Սիրիայի առաջին հայ ավետարանական համայնքները: Հալեպում Հայ Ավետարանական եկեղեցի հիմնադրվեց 1852թ., Քեսապում՝ 1853թ.:
Նախացեղասպանական շրջանում հայ ավետարանականության գործունեությունն ընդգրկում էր հիմնականում երկու բնագավառ՝ հոգևոր-եկեղեցական և կրթական: Ավետարանական եկեղեցիներին կից գործում էին դպրոցներ:

2. *Հետցեղասպանական շրջան:* Հայոց ցեղասպանության հետևանքով բազմահազար հայեր, այդ թվում նաև՝ ավետարանականներ Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից գաղթեցին և հաստատվեցին Սիրիայում¹, ինչը հանգեցրեց ինչպես տեղի հայ ավետարանական համայնքների սովորացմանը, այնպես էլ նորերի ձևավորմանը: Հալեպից և Քեսապից բացի հայ ավետարանական համայնքներ ձևավորվեցին նաև Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում և Եղեռնի հետևանքով հայաշատ դարձած այլ բնակավայրերում:

Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած մարտահրավերները, ինչպես նաև Սիրիայի անկախացման արդյունքում առաջ եկած ազատություններն ընդլայնեցին հայ ավետարանական համայնքի գործունեության շրջանակները: Հոգևոր-եկեղեցական և կրթական ոլորտներին ավելացան սոցիալականը, մշակութայինը և այլն, ինչը ենթադրում է նաև կազմակերպական կառույցների ընդլայնում թե՛ քանակական, թե՛ տեսակային (բազմազանության) առումներով:

Սիրիայի հայ ավետարանական համայնքի պատմության վերոհիշյալ երկու փուլերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ընդգծել դրանց հետևյալ հիմնական առանձնահատկությունները.

- Եթե նախացեղասպանական փուլում Սիրիան Օսմանյան կայսրության մաս էր կազմում և, հետևաբար, տեղի հայ ավետարանական համայնքն էլ գտնվում էր թուրքական պետության շրջանակներում, ապա հետցեղասպանական փուլում, երբ Սիրիան արդեն ձեռք էր բերել անկախություն, տեղի հայ ավետարանական համայնքը գտնվում և գործում էր անկախ Սիրիայի կազմում, որտեղ նրա համար կային գործունեության ավելի ազատ պայմաններ:
- Եթե նախացեղասպանական փուլում Սիրիայի հայ ավետարանական համայնքը թե՛ քանակապես և թե՛ աշխարհագրական սփռվածության առումով փոքր էր, ապա Հայոց ցեղասպանության հետևանքով այն ընդլայնվեց: Նախացեղասպանական շրջանում Սիրիայի հայ ավետարանական համայնքն ընդգրկում էր հիմնականում Հալեպն ու Քեսապը: Հետցեղասպանական շրջանում հայ ավետարանական համայնքներ ձևավորվեցին նաև Դամասկոսում և Սիրիայի հայաշատ դարձած այլ վայրերում:
- Եթե նախացեղասպանական շրջանում Սիրիայի հայ ավետարանական համայնքի գործունեությունն ընդգրկում էր հիմնականում եկեղեցական

¹ Տարբեր տվյալներով՝ Ցեղասպանության հետևանքով Սիրիայում ապաստանեց 70-100 հազ. հայ: Տե՛ս *Nicola Migliorino*, (Re)Constructing Armenia in Lebanon and Syria: Ethno-Cultural Diversity and the State in the Aftermath of a Refugee Crisis, 2008, p. 31-34.

և կրթական ոլորտները, ապա հետցեղասպանական շրջանում նրա գործունեության շրջանակներն ընդլայնվեցին՝ ընդգրկելով նաև սոցիալական, մշակութային և այլ բնագավառներ:

- Եթե նախացեղասպանական շրջանում հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցները միայն եկեղեցական և կրթական բնույթի էին, ապա երկրորդ փուլում դրանք, քանակապես ընդլայնվելով, միաժամանակ ընդլայնեցին իրենց բազմազանությունը:

Կազմակերպական կառույցները

Սիրիայի հայ ավետարանական համայնքն աչքի է ընկնում կազմակերպական կառույցների առատությամբ և բազմազանությամբ: Դրանք կարելի է բաժանել չորս մասի.

- Ղեկավար
- Եկեղեցական
- Կրթական
- Սոցիալական

1. *Ղեկավար* կառույցները Սիրիայի հայ ավետարանական համայնքում երկուսն են՝ Հայ ավետարանական համայնքի գրասենյակը և Հայ ավետարանական կրթական խորհուրդը: Երկու հաստատություններն էլ գտնվում են Հալեպում և զբաղվում են կազմակերպչական գործունեությամբ: Երկուսն էլ գլխավորում է Սիրիայի հայ ավետարանականների համայնքապետ, վերապատվելի Հարություն Սելիմյանը²:

2. *Եկեղեցական* կառույցները Սիրիայի հայ ավետարանական համայնքում ստեղծվել են 19-րդ դարի կեսին՝ հայ ավետարանական համայնքի ձևավորմանը զուգընթաց: Առաջին Հայ Ավետարանական եկեղեցիները՝ Հալեպի Հայ Ավետարանական Էմանուել եկեղեցին և Քեսապի Հայ Ավետարանական Սուրբ Երրորդություն եկեղեցին, հիմնադրվել են համապատասխանաբար 1852թ. և 1853թ.:

Ներկայումս Սիրիայի հայ ավետարանական համայնքն ունի 11 եկեղեցի, որոնց գերակշիռ մեծամասնությունը կենտրոնացված է ավանդական հայ ավետարանական համայնքներում՝ Հալեպում (5) և Քեսապում (4): Մեկական Հայ Ավետարանական եկեղեցիներ կան նաև Դամասկոսում և Հոմսում³:

² Տե՛ս AMAA Directory 2010: Armenian Evangelical Churches, Institutions, Organizations, Pastors and Christian Workers Worldwide, p. 16 <http://www.amaa.org/Directory%20for%20website.pdf>

³ Նույն տեղում, էջ 15-16:

3. *Կրթական* հաստատությունները Սիրիայի հայ ավետարանական համայնքում դպրոցներն են: Դրանց քանակը ներկայումս 6-ն է: Կրթական հաստատությունների գերակշիռ մեծամասնությունը՝ 4 հատ, կենտրոնացված է Հալեպում: Մեկական դպրոց կա Դամասկոսում և Քեսապում⁴: Տաղանդավոր հայ երիտասարդների արտագաղթը կասեցնելու նպատակով մտադրություն կա Հալեպում հիմնել հայկական համալսարան⁵:
4. *Սոցիալական* կառույցները Սիրիայի հայ ավետարանական համայնքում 8-ն են: Դրանք նույնպես գլխավորապես կենտրոնացված են Հալեպում (7): Սոցիալական կառույցներից միայն մեկը՝ Հայկական քրիստոնեական ջանից ամառային ճամբարն է գտնվում Հալեպից դուրս՝ Քեսապում⁶: Սիրիայի հայ ավետարանական համայնքի սոցիալական կառույցները բարեգործական, առողջապահական, երիտասարդական և այլ բնույթի հաստատություններ են: Դրանցից են, օրինակ, Ջինիշյան հիշատակի ձեռնարկի Սիրիայի մասնաճյուղը, Հովարդ Կարագոյան հաստատության Սիրիայի մասնաճյուղը, Քրիստոնեական ջանից երիտասարդական կենտրոնը և այլն:

Կազմակերպական կառույցների գործունեության համահայկական բնույթը

Սիրիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների գործունեությունը չի սահմանափակվում միայն նեղ ավետարանական համայնքի շրջանակներում: Այն ընդգրկում է ողջ սիրիահայ համայնքը՝ անկախ դավանանքային տարբերություններից, ինչը վկայում է Սիրիայի հայ ավետարանականների՝ ողջ սիրիահայության մեջ ինտեգրվածության և նրա անբաժանելի մասը լինելու մասին:

Սիրիայի հայ ավետարանական կառույցների գործունեության համահայկական բնույթը դրսևորվում է հետևյալ բնագավառներում.

- Հոգևոր
- Կրթական
- Սոցիալական

1. *Հոգևոր ոլորտ*: Անգամ եկեղեցական կառույցների գործունեությունն է տարածվում ոչ միայն ավետարանականների վրա. Սիրիայի Հայ Ավե-

⁴Նույն տեղում, էջ 16:

⁵ *Charlotte Wiedemann*, Armenians in Syria: Half a Home http://www.qantara.de/webcom/show_article.php/_c-478/_nr-790/webcom/show_article.php/_c-478/_nr-714/i.html

⁶Տե՛ս AMAA Directory ..., p. 16

տարանական եկեղեցիների այցելուների թվում են նաև հայ առաքելականները: Ըստ ավետարանական հոգևորականների՝ գլխավորը քրիստոնեական հավատքն է, դավանանքը երկրորդական նշանակություն ունի: Ինչպես նշում է Դամասկոսի Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր հովիվ Տաթև Պասամաճյանը. «Կարևորը հայ քրիստոնյա լինելն է: ...Վերջում, երբ Աստծու մոտ գնանք, չի հարցնելու՝ ավետարանակա՞ն ես, թե՞ առաքելական»⁷:

2. *Կրթական ոլորտ*: Սիրիայի հայ ավետարանական կրթական հաստատությունների համահայկական բնույթը երևում է երկու հանգամանքով.

- *Հայեցի կրթությամբ*: 19-րդ դարի վերջից սկսած՝ արվել է ամեն ինչ հայ ավետարանական դպրոցներում հայեցի կրթությունն ապահովելու համար: Ինչպես նկատում է վերապատվելի Ե.Քասունին. «...Մինչև 1890-ական թուականները... Հայ Աւետարանական դպրոցներուն մէջ անգլերէն, հայատառ եւ արաբատառ թրքերէն կը դասաւանդուէր. հայերէնը չկար: Հայ Աւետարանականները 1893-էն ետք պարտադիր դարձուցին հայերէնի և կարգ մը այլ նիւթերու հայերէնով ուսուցումը իրենց այն գիւղերուն մէջ, ուր հայերը միակ բնակիչներն էին»⁸:

- *Աշակերտության դավանանքային կազմով*: Հայ ավետարանական դպրոցներում ուսանող աշակերտների դավանանքային կազմը չի սահմանափակվում միայն ավետարանական երեխաներով: Հայ առաքելական երեխաների կողմից բողոքական դպրոցներ հաճախելը ընդունված է եղել դեռևս նախացեղասպանական շրջանում՝ կապված ազգային դպրոցների անմխիթար վիճակի հետ: «...Ոչ դաւանափոխ ընտանիքներ ի վերջոյ կը յօժարին իրենց զաւակներն ալ բողոքական ու լատին վարժարանները դրկել, որովհետեւ ազգային դպրոցները ո՛չ կանոնաւոր դասագիրք ունին, ո՛չ շէնք, ո՛չ դպրոցական իրեր եւ ո՛չ ալ բաւարար ու որակեալ ուսուցիչներ», - գրում է Հ. Չոլաքյանը⁹:

3. *Սոցիալական ոլորտ*: Սոցիալական կառույցների գործունեությունից չի կարող օգտվել միայն նեղ ավետարանական համայնքը, քանի որ դրանք

⁷ Հարցազրույց Հայ Ավետարանական եկեղեցու Դամասկոսի հովիվ, պատվելի Տաթև Պասամաճյանի հետ, *Արաքս Փաշայան*, Դամասկոսի հայ համայնքը. ներկան և հեռանկարը, Նորավանք ԳԿՀ տեղեկագիր, 2008թ., թիվ 23, էջ 33, 34:

⁸ Վեր. Եղիա Քասունի, Լուսաշաւիղ պատմութեան հայ աւետարանական շարժման, Պէրյուք, 1947, էջ 159:

⁹ Տե՛ս *Յակոբ Չոլաքեան*, Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրություն, Անթիլիաս, 2006թ., էջ 146):

ստեղծվել են ծանր կացության մեջ գտնվող սիրիահայերին օգնելու նպատակով: Այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են Հայ ծերանոցը, Հովարդ Կարագոյան հաստատության և Ջինիշյան հիշատակի ձեռնարկի Սիրիայի մասնաճյուղերը, Արևիկ կենտրոնը, տեղի Հայության շրջանում իրականացնում են բազմաբնույթ սոցիալական ծրագրեր¹⁰: Սոցիալական կառույցների գործունեությունը չի կարող սահմանափակվել միայն նեղ ավետարանական համայնքի շրջանակներում նաև այն պատճառով, որ դրանցից որոշները տնօրինվում են Սիրիայի հայկական երեք հարանվանությունների կողմից:

Միջդավանական համագործակցությունը

Սիրիահայության երեք դավանանքային խմբերի մոտ էլ բարձր է ազգային ինքնագիտակցությունը, որը նրանց միավորում է մեկ ընդհանրության՝ Սիրիայի հայ համայնքի մեջ: Սիրիայի հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական հարանվանություններին բնորոշ են հայկական ինքնության հատկությունները: Օրինակ՝ ընդհանուր հայրենիքի գիտակցությունը, որը վառ արտահայտվեց 1946-48թթ. մեծ հայրենադարձության շրջանում: Հայրենադարձության խանդավառության ալիքը, ինչպես վկայում է Հ.Չոլաքյանը, իր մեջ կլանեց ողջ սիրիահայությանը՝ անկախ դավանանքային տարբերություններից: «Ներգաղթ կը կազմակերպուի Սիրիոյ բոլոր շրջաններէն՝ գիւղերէն ու քաղաքներէն: Կը ներգաղթեն հայկական երեք կրօնական համայնքներու եւ բոլոր շրջանակներու պատկանող ընտանիքներ եւ անհատներ»¹¹:

Սիրիայի հայ ավետարանական համայնքի՝ ողջ սիրիահայության անբաժանելի մասը լինելու վառ արտահայտություն են նաև հայ առաքելական և կաթողիկե հարանվանությունների հետ նրա սերտ շփումներն ու համագործակցությունը: Միջդավանական համագործակցությունը դրսևորվում է երկու մակարդակով.

- *Անհատական*, երբ ակտիվ շփման և գործակցության մեջ են գտնվում երեք հարանվանությունների առանձին անհատներ:
- *Ինստիտուցիոնալ*, երբ շփումներն ու համագործակցությունը տեղի են ունենում Հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական համայնքների միջև՝ նրանց ինստիտուցիոնալ կառույցների միջոցով:

¹⁰ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2003թ., էջ 527, 528, 529:

¹¹ *Յակոբ Չոլաքեան*, նշվ. աշխ., էջ 178:

Անհատական համագործակցությունը դրսևորվում է հետևյալ հիմնական ձևերով.

1. *Համազգային կառույցներում երեք հայ հարանվանությունների ներկայացուցիչների ընդգրկվածությունն ու համատեղ գործունեությունը*: Միջդավանական համագործակցության այս ձևն արմատներով գնում է դեռևս Սիրիայի հայ ավետարանական համայնքի պատմության նախացեղասպանական փուլը՝ 1890-ական թթ.: Նման համագործակցության սկիզբը դրվեց հայ առաջին կուսակցությունների գործունեությամբ, որոնք էլ հանդես էին գալիս որպես համազգային կառույցներ: Ինչպես հիշատակում է Հ.Չոլաքյանը. «Ս.Դ.Հ.Կ.ն էր, որ ամենէն առաջ ազգային գիտակցութիւն եւ ապրում արթնցուց դաւանական խնդիրներով այնքան բաժան-բաժան եղած ու իրարու դէմ թշնամական զգացումներ տածող համագիւղացիներու մէջ: Այդ գիւղերուն մէջ կուսակցութեան անդամ էին հայ քահանան, կաթողիկ վարդապետը, բողոքական քարոզիչն ու պատուելին, եւ նոյնիսկ լատին օտարազգի հայրը ...»¹²:

Հետցեղասպանական շրջանում ակնառու է ՀԲԸՄ օրինակը: «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ներկայութիւնը Անտիոքի շրջանի միւս գիւղերուն պարագային, ինչպէս Քեսապ, բարերար դեր ունեցած է տարբեր համայնքներու զաւակները նոյն մասնաճիւղին մէջ առնելու եւ անոնց մէջ ազգային դաստիարակութեան ընդհանուր նկրտումներ ապահովելու տեսակէտէն: Հայ լուսաւորչականին հետ նոյն մասնաճիւղին մէջ մտած են նաեւ բողոքականը, կաթողիկէն եւ նոյնիսկ՝ լատինը», - վկայում է Հ. Չոլաքյանը¹³:

2. *Համազգային միջոցառումներին երեք հայ հարանվանությունների ներկայացուցիչների մասնակցությունը*: Ամենազանգվածային համազգային միջոցառումներն ամեն տարի ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի միջոցառումներն են, որոնց հայերը մասնակցում են՝ անկախ դավանանքային տարբերություններից: Դամասկոսի համալսարանի դասախոս Նորա Արիսյանի խոսքերով. «Այդ օրը սիրիահայերն աշխատանքի չեն գնում, նրանք փակում են իրենց խանութները և երեկոյան ներկա գտնվում միջոցառումներին: Այսինքն՝ ցանկացած հայ Սիրիայում իր հարզանքի տուրքն է տալիս նահատակներին»¹⁴:
3. *Աշխարհիկ կարգի հարաբերություններում և գործունեության բնագավառներում դավանանքային տարբերությունների դերի ու նշանակու-*

¹² Նույն տեղում, էջ 151:

¹³ Նույն տեղում, էջ 187:

¹⁴ Հարցազրույց Դամասկոսի համալսարանի դասախոս, Սիրիայի գրողների միության անդամ Նորա Արիսյանի հետ, *Արաքս Փաշայան*, նշվ. աշխ., էջ 35:

թյան բացակայությունը: Այդ կարգի հարաբերություններում և գործունեության ոլորտներում ընդգրկվում են ինչպես առաքելական, այնպես էլ կաթողիկե և ավետարանական հայերը: Լավ օրինակ են սիրիահայ համայնքի սպորտային խմբակները, որոնցում ընդգրկվում են հայերը՝ անկախ իրենց դավանանքային տարբերություններից:

Այլ օրինակ. ՌԱԿ կյոռ տարեդարձներին նվիրված միջոցառումներին, որպես կանոն, հրավիրվում են «...անձնավորություններ, որոնք Հայ ազգին մատուցել են գնահատելի ծառայություններ՝ առանց նկատի ունենալու նրանց կուսակցական պատկանելությունը կամ դավանանքը»¹⁵:

Բնստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցության դրսևորման ձևերն են.

1. Համատեղ միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը:
2. Մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների մասնակցությունը:
3. Համագգային միջոցառումներին երեք հարանվանությունների մասնակցությունը:
4. Կառույցների համատեղ հիմնումը և դրանց համատեղ տնօրինումը:
5. Սիրիահայ համայնքային խնդիրների լուծման համար համատեղ պայքարը:

Բնստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությունն ակտիվորեն դրսևորվում է քաղաքական, սոցիալական, գիտամշակութային և կրթական բնագավառներում:

1. *Քաղաքական* ասպարեզում Սիրիայի հայ երեք հարանվանությունների միջև համագործակցությունը նպատակաուղղված է համագգային խնդիրների լուծմանը: Այս տեսակետից բացառիկ նշանակություն ունի Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման համար մղվող պայքարը: Այս հարցում Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների միջև առկա են սերտ համագործակցություն և փոխըմբռնում:

Քաղաքական ասպարեզում միջդավանական համագործակցությունն ու շփումները դրսևորվում են հիմնականում համատեղ միջոցառումների կազմակերպման և համագգային միջոցառումներին երեք հարանվանությունների մասնակցության ձևով: Ամենամյա ապրիլքսանչորսյան միջո-

¹⁵ Հարցազրույց Թեքեյան մշակութային միության պատասխանատու, ՌԱԿ Դամասկոսի Վերին մարմնի փոխատենապետ Ջորջ Բարսեղյանի հետ, *Արաքս Փաշայան*, նշվ. աշխ., էջ 49:

ցառումները, օրինակ, կազմակերպվում են Հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական հարանվանությունների կողմից:

Համազգային միջոցառումներին համատեղ մասնակցության ակնառու օրինակ էր այն, որ 2010թ. ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի՝ Սիրիա կատարած այցելության ընթացքում Հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական համայնքների առաջնորդները միասնաբար ուղեկցում էին ՀՀ նախագահին և համատեղ մասնակցում նախագահի այցի ընթացքում նախատեսված միջոցառումներին:

2. *Սոցիալական* ոլորտը շատ կարևոր տեղ ունի միջդավանական համագործակցության մեջ: Այստեղ համագործակցությունը դրսևորվում է սոցիալական կառույցների համատեղ հիմնադրմամբ և տնօրինմամբ: Այդպիսի սոցիալական կառույցներ են Հայ ծերանոցը, Հովարդ Կարազյոզյան հաստատության և Ջինիշյան հիշատակի ձեռնարկի Սիրիայի մասնաճյուղերը, հաշմանդամ երեխաների Արևիկ կենտրոնը¹⁶:

3. *Գիտամշակութային* ոլորտում միջդավանական համագործակցության ու շփումների դրսևորման ձևեր են համազգային միջոցառումներին համատեղ մասնակցությունը, համատեղ միջոցառումների կազմակերպումը, մեկ համայնքի կողմից կազմակերպված միջոցառումներին մյուսների մասնակցությունը:

Համազգային միջոցառումներին համատեղ մասնակցության տեսակետից ուշադրության է արժանի Սիրիայում ՀՀ դեսպանության կողմից կազմակերպվող մշակութային միջոցառումներին Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների համատեղ մասնակցությունը: Համատեղ միջոցառումների առումով ուշագրավ օրինակ է հայ գրերի գյուտի 1600-ամյակի, քրիստոնեության ընդունման 1700-ամյակի և այլ նշանավոր տարեդարձերի նշումը միասնական ուժերով¹⁷:

Ինչ վերաբերում է մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների մասնակցությանը, ապա համագործակցության այդ ձևը դրսևորվում է անգամ տարածաշրջանային մակարդակով: Օրինակ, 2009թ. հոկտեմբերի վերջին Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության կողմից կազմակերպված համագումարին՝ նվիրված Ադանայի ջարդերի 100-ամյակին, մասնակցում էր և զեկույցով հանդես եկավ Սիրիայի հայ ավետարանականների համայնքապետ, վերապատվելի Հ.Սելիմյանը¹⁸:

¹⁶ Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 527, 528, 529:

¹⁷ Հարցազրույց Հայ Առաքելական եկեղեցու Դամասկոսի թեմի առաջնորդ Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանի հետ, *Արաքս Փաշայան*, նշվ. աշխ., էջ 24:

¹⁸ Ալիք, 01.11.2009:

4. *Կրթական* ոլորտում միջոցավանական համագործակցության նպատակն է աջակցել հայեցի կրթությանը: Հ. Չոլաքյանը, խոսելով 19-րդ դարի վերջի դրության մասին, նկատում է, որ ազգային կրթության և դաստիարակության հարցը անհրաժեշտություն է «...բոլոր հայոց համար, ի նչ համայնքի ալ պատկանած ըլլային անոնք»¹⁹:

Այս ասպարեզում համագործակցության ակնառու ձև էր հայկական հարանվանությունների համատեղ պայքարը, որով նրանք միասնական ջանքերով կարողացան հասնել նրան, որ հայկական կրթական հաստատություններում թույլատրվի հայերենի ուսուցումը, ինչպես նաև կրոնագիտության դասընթացներն անցկացվեն հայերենով:

Այսպիսով, Սիրիայի հայ ավետարանական համայնքի կազմակերպական կառույցների ակտիվ գործունեությունն աշխուժություն է հաղորդում համայնքի կյանքին: Դրանց գործունեության տարածումը ողջ սիրիահայության շրջանում, միջոցավանական շփումներն ու համագործակցությունը տեղի Հայ առաքելականների և կաթողիկեների հետ վկայում են այն մասին, որ Սիրիայի հայ ավետարանական համայնքը կազմում է տեղի հայ համայնքի անբաժանելի մասը:

¹⁹ Յակոբ Չոլաքեան, նշվ. աշխ., էջ 151:

ԿԻՔԵՐՉՈՐՔԵՐ. ԺԱՄԱՆԱԿՈՎ ԹԵԼԱԴՐՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

*Մասնվել Մարտիրոսյան**

Կիբերահաբեկչությունը և այլ կիբերսպառնալիքներն արդի պետության համար, որտեղ տեղեկատվական համակարգերը և հաղորդակցություններն ավելի ու ավելի են գերակշիռ ենթակառուցվածքային դեր խաղում, լուրջ փորձություն են հանդիսանում: Առանցքային հանգույցների ավելացումը, որոնք կարող են շարքից դուրս բերել պետությունների ենթակառուցվածքները, շատ երկրների ստիպում են մտածել կիբերգործերի ստեղծման ուղղությամբ, որոնք կկարողանան պաշտպանել երկրի վիրտուալ տարածքը:

Այսօր կիբերահաբեկիչների սակավաթիվ խմբավորումն ի վիճակի է եական վնաս հասցնել հասարակական կարևոր նշանակություն ունեցող կառույցներին: Ելնելով այն բանից, որ տեխնոլոգիաներն էլ ավելի են ներգրավվում ռազմավարապես կարևոր կառույցների կառավարման գործում, խոցելիությունն ավելի արագ է աճում, քան հնարավոր սպառնալիքներին պետության հակահարված տալու հնարավորությունները:

Այսպես, այս տարվա փետրվարին ամերիկյան ոչ առևտրային *Bipartisan Policy Center*¹ կազմակերպությունը փորձ կատարեց, որի ընթացքում փորձեց պարզել, թե որքանով է խոցելի ԱՄՆ տնտեսությունը հաքերների գրոհների պարագայում: Արդյունքներն անսպասելիորեն բացասական էին: Պետական հաստատությունների վրա «գրոհի» համար օգտագործվեց փորձի մասնակիցների ընդամենը 230 անհատական համակարգիչ: Դա բավական էր, որպեսզի հաշված բոպենների ընթացքում կաթվածահար արվեին այն համակարգիչները, որոնք պատասխանատու էին երկրի էլեկտրամատակարարման համար: Այնուհետև գիտնականները նման գրոհ կազմակերպեցին բջջային ցանցերի վրա. բաժանորդների բջջային սարքերը վարակվում էին վիրուսով, ինչից հետո սմարթֆոնները սկսում էին ինտենսիվորեն սպառել տվյալների թրաֆիկը: Արդյունքում՝ բազային կայանները և բջջային ցանցերը զանգվածաբար դուրս էին գալիս շարքից: *Bipartisan Policy Center*-ի փորձագետները հաստատում են. եթե հաքերները նպատակադրվեն խոցել ԱՄՆ-ը և դա անեն առավելագույն արդյունավետությամբ, 40 մլն ամերիկացիներ երկրի արևելքում,

* «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

¹ <http://www.bipartisanpolicy.org>

«հարձակումն» սկսելուց արդեն 30 րոպե հետո, կմնան առանց լույսի: Կանցնի մեկ ժամից մի փոքր ավելի, և բջջային կապի 60 մլն բաժանորդներ երկրում կտեսնեն, որ իրենց հեռախոսները վերածվել են չաշխատող «կախազարդերի»: *Wall Street*-ի աշխատանքը կաթվածահար անելու համար տառացիորեն մի քանի ժամ կպահանջվի²:

Առևտրային և պետական կառույցների վրա գրոհների թիվը տարեցտարի ավելանում է: 2009թ. ընկերությունների 75%-ը ենթարկվել է կիբերգրոհների՝ կորցնելով միջինը \$2 մլն: Այսպիսին են *Symantec* ընկերության անցկացրած կորպորատիվ անվտանգության գլոբալ հետազոտությունների արդյունքները: 27 երկրների SS-տնօրենների, տեղեկատվական անվտանգության կառավարման ղեկավարների և SS-մենեջերների շրջանում անցկացված հարցախույզը վկայում է այն մասին, որ գլոբալ մակարդակով կորպորատիվ հատվածում մեծացել է կիբերհանցագործների ակտիվությունը: Անցած տարվա ընթացքում ընկերությունների 75%-ը ենթարկվել է կիբերգրոհների, իսկ 36%-ը գրոհները բնորոշել է բարձրարդյունավետ չարագործների համար: Ավելին, հարցման ենթարկվածների 29%-ը հայտարարել է, որ անցած տարվա ընթացքում գրոհները հաճախացել են³:

ԱՄՆ-ի և Եվրամիության երկրների համար իրենց կիբերտարածքի պաշտպանությունը գերակա է դառնում, ինչը պահանջում է կառուցվածքային փոփոխություններ կատարել ուժային գերատեսչություններում: Կիբերպաշտպանությունը համակարգային մոտեցում է պահանջում, և դրա համար ազդանշան ծառայեցին 2007թ. գարնանը տեղի ունեցած գրոհներն Էստոնիայի վրա: Էստոնական ցանցերի խափանումից հետո (ենթադրվում է, որ գրոհները կազմակերպել էին ռուս հաքերները, որոնք, հավանաբար, ուղղորդվում էին ուժային կառույցների կողմից) պաշտոնական Տալլինը ստիպված եղավ օգնության համար դիմել ՆԱՏՕ-ին: Գրոհն Էստոնիայի վրա առիթ հանդիսացավ, որպեսզի գլոբալ վերանայման ենթարկվի Հյուսիսատլանտյան դաշինքի կողմից իրականացվող կիբերպաշտպանության ընդհանուր ռազմավարությունը:

Փորձագիտական հետազոտությունները հանգեցրին ՆԱՏՕ մոտեցումների որակական փոփոխությունների: Ս.թ. հունիսի սկզբին տարածվեց փորձագիտական եզրակացությունը: Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը դիտարկում է ռազմական ուժի կիրառման հնարավորությունը թշնամիների նկատմամբ, որոնք կիբերգրոհներ են կազմակերպում դաշինքի անդամ պետությունների դեմ: Ընդ որում, այս տեսակետից ամենավտանգավոր երկրներն են համարվում Ռուսաստանը և Չինաստանը:

Կիբերգրոհների կազմակերպիչների դեմ զինված ուժեր կիրառելու առա-

² http://www.expert.ru/articles/2010/06/08/otvet_kiberugroze/

³ http://oren-help.ru/publ/kiberataki_obkhodjatsja_kompanijam_v_srednem_po_2 mln_doll_v_god/1-1-0-5

ջարկությունն արել է դաշինքի փորձագետների՝ ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի գլխավորած խումբը: «ՆԱՏՕ երկրների դեմ հաջորդ գրոհը կլինի օպտիկամանրաթելային մալուխի գծով», - ասվում է մասնագետների կազմած զեկույցում:

Փաստաթղթում նշվում է, որ կիբեռահաբեկչությունը, որը վտանգ է ներկայացնում ենթակառուցվածքի համար, համեմատելի է զինված հարձակման հետ, ուստի պահանջում է համապատասխան հակահարված: «Լայնածավալ կիբեռգրոհը կառավարման համակարգերի կամ ՆԱՏՕ էներգետիկ սերվերների վրա միանգամայն թույլատրելի է դարձնում պատասխան միջոցների կիրառումը՝ համաձայն Հյուսիսատլանտյան դաշինքի կանոնադրության 5-րդ կետի», - կարծում են փորձագետները⁴:

ՆԱՏՕ այս մոտեցումը կիբեռպատերազմը դնում է ավանդական ռազմական բախումների հետ նույն մակարդակում: Հետագայում այն հիմք կդառնա ինչպես ռազմական ստրատեգիայի վերանայման, այնպես էլ պաշտպանական համակարգերում կառուցվածքային փոփոխությունների համար:

Նման փոփոխություններ այժմ արդեն կատարվում են: Այսպես, ԱՄՆ-ը իր վիրտուալ տարածքների պաշտպանության տնօրինումը հանձնում է առանձին կառուցվածքի: Բացի այն, որ ԱՄՆ ուժային կառույցներում գոյություն ունեն առանձին վարչություններ, որոնք պատասխանատու են կիբեռանվտանգության համար, ԱՄՆ Ռազմածովային ուժերը 2010թ. հունվարի 26-ին կիբեռգործեր ստեղծեցին: Այդ *CYBERFOR*-ը (մոտ 14 հազար զինվորական և քաղաքացիական անձինք՝ հաստիքով⁵) անմիջականորեն գտնվում է ԱՄՆ ՌԾՈւ հրամանատարության ներքո և աշխատելու է ՌԾՈւ տեղեկատվական անվտանգության *NETWARCOM* ծառայության հետ համատեղ: *CYBERFOR*-ի պարտականությունների մեջ են մտնում ծածկագրական աշխատանքը, տեղեկատվական աջակցության ապահովումը, համակարգչային ցանցերից և հակառակորդի կողմից բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարված հարձակումներից պաշտպանությունը: Բացի այդ, նոր գործերը նաև տիեզերական գործողություններ կատարելու իրավունք կստանան, որոնք կիրականացվեն ցամաքում և ջրում ԱՄՆ ՌԾՈւ-ին օժանդակելու համար⁶:

Այսօր տեխնոլոգիապես զարգացած երկրները հանգում են իրենց ուժային կառույցների տրամաբանական զարգացմանը՝ ստեղծում են մասնագիտացված ուժեր, որոնք ի վիճակի են ինչպես դիմակայել երկրի կիբեռտարածքի դեմ իրականացված համակարգված գրոհներին, այնպես էլ պատասխան հարվածներ հասցնել պոտենցիալ հակառակորդի ենթակառուցվածքին:

⁴ <http://www.utro.ru/articles/2010/06/08/899546.shtml>

⁵ <http://www.cyberfor.navy.mil/>

⁶ <http://www.lenta.ru/news/2010/01/27/cyberfor/>

Եզրակացություններ Հայաստանի համար

Հայաստանի համար ենթակառուցվածքային խոցելիությունը հեռավոր կիբեր-գրոհների համար այնքան էլ բարձր չէ, ինչպես ԱՄՆ-ում կամ Եվրամիության երկրներում: Միևնույն ժամանակ, արդեն ակնհայտ է, որ Հայաստանի տարբեր ենթակառուցվածքներում ներդրվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ, և առաջիկա տարիներին կարելի է կանխատեսել լայնածավալ կառուցվածքային փոփոխություններ, որոնք, իրենց հերթին, կմեծացնեն խոցելի հանգույցների թիվը:

Հայաստանն արդեն պարբերաբար ենթարկվում է ադրբեջանական և թուրքական հաքերային խմբերի հարձակումներին: Այսօր նրանց ակտիվությունը լուրջ վնաս չի հասցնում երկրին: Հատկապես նկատի ունենալով այն, որ պետական սերվերներն այժմ գտնվում են Ազգային անվտանգության ծառայության պաշտպանության ներքո: Միևնույն ժամանակ, օրինակ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության շուրջ լարվածության թեժացումը կարող է հանգեցնել այն բանին, որ ավելի հաճախակիանան գրոհները ինտերնետի հայկական հատվածի վրա, ինչը լուրջ ձևափոխություններ կառաջացնի տեղեկատվական դաշտում:

Ընդ որում, հարկ է հաշվի առնել, որ Հայաստանը պոտենցիալ թիրախ է ոչ միայն թշնամական երկրների կամ ահաբեկչական խմբավորումների, այլ նաև քրեական խմբերի համար, որոնք կարող են հետևել զուտ մերկանտիլ նպատակներ, օրինակ՝ գրոհներ երկրի ֆինանսական ցանցերի վրա:

Կիբերգործերի ստեղծումն այսօր Հայաստանի համար անհրաժեշտություն է, քանի որ, փաստորեն, երկրի կիբերտարածքը գործնականում պաշտպանված չէ ենթադրյալ թշնամու լայնածավալ գրոհներից: Փաստացի ոչ մի կառույց չկա, որը պարտավոր է և հնարավորություն ունի պաշտպանել երկրի կիբերտարածքը լուրջ սպառնալիքներից: Կիբերգործերը կոչված են լուծելու հենց նման խնդիրներ, որոնց անհրաժեշտությունն այսօր արդեն ակնհայտ է:

Կիբերգործերը պետք է փոխգործակցեն հետախուզական կառույցների և ռադիոէլեկտրոնային պայքարի ուժերի հետ: Հակամարտության հնարավոր սրման շրջանում կիբերգործերը պետք է ապահովեն հայկական տեղեկատվական դաշտի պաշտպանությունը: Նրանց խնդիրներից պետք է լինի նաև հակառակորդի ինտերնետ-ակտիվության ճնշումը զինված հակամարտության ժամանակ՝ երկրի քարոզչական կառույցների հետ փոխգործակցելով:

Այսօրինակ համակարգված կառույցների բացակայության բացասական կողմը պարզ երևաց 2008թ. օգոստոսին վրաց-ռուսական պատերազմի շրջանում: Այդ ժամանակ ինտերնետի վրացական հատվածի վրա իրականացված

կենտրոնացված կիբերգրոհը հանգեցրեց Վրաստանի տեղեկատվական ակտիվության կտրուկ անկման, և Ռուսաստանը լուրջ գերազանցություն ստացավ քարոզչական պատերազմում, ինչն էլ վճռական ազդեցություն ունեցավ առհասարակ պատերազմի ելքի վրա:

Միևնույն ժամանակ, երկրի կիբերտարածքի պաշտպանության խնդիրները լուծելուն կոչված կառույց ստեղծելու հարցում հապաղելը կոժվարացնի դրա կազմավորումը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բարձր տեմպերի և դրանց հետ կապված սպառնալիքների փոփոխության դինամիկության առումով:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակն է կիրերհարձակումները հավասարեցնել զինված հարձակումների հետ

ՆԱՏՕ մի խումբ փորձագետներ՝ ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթի գլխավորությամբ, եկել են այն եզրահանգման, որ կենսական նշանակություն ունեցող գերատեսչությունների դեմ կատարված համակարգչային գրոհները հավասարազոր են զինված հարձակումներին, ինչն արդարացնում է ռազմական միջոցներով տրված հակահարվածը:

Փորձագետների կարծիքով՝ «մեծամասշտաբ կիրերհարձակումները դաշինքի հրամանատարական և վերահսկիչ համակարգերի վրա կարող է հանգեցնել պատասխան հավաքական պաշտպանական միջոցառումների՝ 5-րդ հոդվածին համապատասխան»: Հյուսիսատլանտյան պայմանագրի այս կետի համաձայն՝ դաշնակից երկրներից որևէ մեկի վրա կատարված հարձակումն ընկալվում է որպես դաշինքի բոլոր մասնակիցների դեմ կատարված հարձակում:

Դաշինքի Պորտուգալիայում անցկացվելիք նոյեմբերյան զագաթաժողովի օրակարգում ընդգրկվելու է կիրերհարձակմանը զինված հակահարված տալու հնարավորության հարցը: Ամերիկյան առաջինն էր այն երկրներից, որը հայտնել էր կիրերգորքերի ձևավորման անհրաժեշտության մասին, որոնք հարկ եղած դեպքում կկարողանան պաշտպանել երկիրը համակարգչային ցանցերի միջոցով իրականացված հարձակումներից և ապահովել կենսական նշանակություն ունեցող էլեկտրոնային համակարգերի անվտանգությունը:

<http://www.rosbalt.ru/2010/06/06/743010.html>

Պենտագոնի ցանցերը մեկ օրում վեց միլիոն հարձակման են ենթարկվում

ԱՄՆ Պաշտպանության նախարարության ցանցերն օրական վեց միլիոն հաքերային հարձակման են ենթարկվում: Ցանցային անվտանգության փորձագետների և լրագրողների հետ Վաշինգտոնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ ասել է ԱՄՆ կիրերհրամանատարության ղեկավար Քիթ Ալեքսանդրը:

ԱՄՆ կիբերհրամանատարության ղեկավար նշանակվելուց հետո իր առաջին հրապարակային ելույթում Ալեքսանդրը հայտարարել է, որ անհանգստացած է պաշտպանական գերատեսչությունների համակարգչային ցանցերում չեզոքացված հարձակումների թվի աճով: Նա նաև հայտարարել է, որ Պենտագոնի 15 հազարի հասնող ցանցերի անվտանգությունն ապահովում է ավելի քան 7 մլն համակարգ:

Ցանցային սպառնալիքների հիմնական աղբյուրներն, ըստ գեներալի, ահաբեկիչներն են, հանցագործ խմբերը և ցանցահենները: Միևնույն ժամանակ, Ալեքսանդրը նշեց, որ երկրի շահերը վտանգի տակ են, ինչի պատճառը «զգալի խոցելիության և վտանգների» առկայությունն է:

Պենտագոնի շրջանակներում կիբերհրամանատարության ստեղծման հրամանը ստորագրել է ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը 2009թ. հունիսին: 2010թ. մայիսին այդ կառույցի ղեկավար նշանակվեց Քիթ Ալեքսանդրը: Կիբերհրամանատարության խնդիրն է ռազմական ցանցերի անվտանգության ապահովումը:

<http://www.lenta.ru/news/2010/06/04/millions/>

ԱՄՆ-ում անվտանգ ռազմական համացանց է ստեղծվում

ԱՄՆ Պաշտպանության նախարարության Հեռանկարային հետազոտությունների վարչությունն (*Defense Advanced Research Projects Agency, DARPA*) աշխատում է մի տեխնոլոգիայի ստեղծման վրա, որն ամերիկացի զինվորականներին թույլ կտա տեղեկատվություն փոխանակել համացանցի միջոցով՝ չզգուշանալով ներթափանցումներից:

Այս տեխնոլոգիան մշակվում է *Safer Warfighter Communications (SAFER)* ծրագրի շրջանակներում: Հեռանկարային հետազոտությունների վարչության ներկայացուցիչների խոսքերով՝ այն ոչ միայն ինտերնետի միջոցով առավել անվտանգ և կայուն կապի հնարավորություն կընձեռի (խոսքն այս կամ այն փաստաթուղթը մի բաժնից մյուսն ուղարկելու մասին է), այլ նաև կապահովի վայրկենական հաղորդագրությունների ծառայությունը, էլեկտրոնային փոստը, սոցիալական ցանցերը, *VoIP*-սերվիսները, վիդեոկոնֆերանսները և այլն:

Ըստ *DARPA*-ի ներկայացուցիչների՝ նրանց նպատակն է հավաքել այն բոլոր տեխնոլոգիաները, որոնք հնարավորություն են տալիս մարդկանց, անձը չբացահայտելով, շփվել համացանցի միջոցով:

<http://internet.cnews.ru/news/top/index.shtml?2010/05/27/393244>

ԱՄՆ-ը նշանակել է առաջին կիբերզենեթային

Դեռևս անցյալ տարվա հունիսին ԱՄՆ զինված ուժերում ստեղծվեց նոր ենթակառույց՝ կիբերհրամանատարություն, որը նախատեսված է համակարգչային ցանցերում կիբերպատերազմ սկսվելու դեպքում վիրտուալ պայքար մղելու, ինչպես նաև ցանցերն արտաքին հարձակումներից պաշտպանելու համար: Օրերս կիբերհրամանատարությունը ղեկավար ունեցավ՝ Քիթ Ալեքսանդրը, որը մինչ այդ զբաղեցնում էր ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (NSA) ղեկավարի պաշտոնը:

Պենտագոնը կիբերհրամանատարության ստեղծումը բացատրում է համակարգչային ցանցերի (այդ թվում նաև զինված ուժերի) աճող խոցելիությունը կիբերհարձակումների հանդեպ նվազեցնելու անհրաժեշտությամբ:

Նոր կառույցի ստեղծման ծրագրերի մասին հայտնի էր դեռ նախագահ Ջորջ Բուշ կրտսերի ղեկավարման տարիներին: ԱՄՆ նոր նախագահ Բարաք Օբաման նույնպես կողմ է այս գաղափարին և հայտարարել է, որ կիբերանվտանգության ապահովման հարցը «ԱՄՆ որպես ազգի, տնտեսության և անվտանգության ամենալուրջ մարտահրավերներից է»:

Նոր հրամանատարության խնդիրներին կարելի է ծանոթանալ NSA իրականացրած գործողություններից մեկի օրինակով, որը հայտնի դարձավ *Washington Post* ռեսուրսի շնորհիվ: «Dot-mil» ծածկանունը կրող գործողությունն ուղղված էր ԿՀՎ մասնագետների և տեղի հատուկ ծառայության մարմինների կողմից իսլամական ծայրահեղականների համար Մաուդյան Արաբիայում ստեղծված կայք-ծուղակի աշխատանքները դադարեցնելուն: Տեղեկանալով, որ այդ կայքի ֆորումում կողորդինացվում են Իրաքում ծավալվող ռազմական գործողությունները՝ Պենտագոնը, անտեսելով ԿՀՎ առարկությունները, կիբերհարձակում ձեռնարկեց, որի արդյունքում դադարեցվեց Մաուդյան Արաբիայում, Գերմանիայում և Տեխասում (ԱՄՆ) տեղակայված 300 սերվերի աշխատանքը:

<http://www.3dnews.ru/software-news/SSHA-naznachili-pervogo-kiber-general/>

Սոցիալական ցանց մահմեդականների համար

Բացվել է նոր սոցիալական ցանց՝ *Madina*, որի նպատակն է համախմբել ողջ աշխարհի մահմեդականներին: Նախագծի կազմակերպիչների խոսքերով ցանցը պետք է հարթակ հանդիսանա մահմեդական երիտասարդների շփման համար և փոխի մահմեդական աշխարհը:

Կանադական *Madina Media Corp* ընկերության ստեղծած *Madina* սոցիալական ցանցը գործառնական առումով հիմնականում կրկնում է *Facebook*-ը: Այցելումներին հնարավորություն է տրված բեռնավորել տեսահոլովակներ,

երաժշտություն, միավորվել խմբերում, ծավալել քննարկումներ: Միննույն ժամանակ, կայքը ստեղծողները նշել են, որ կայքում չի լինելու այնպիսի կոնտենտ, որը վիրավորական թվա մահմեդականներին:

Կանադական *Madina Media* ընկերությունը հայտարարել է նաև անվճար ցանցային հանրագիտարանի՝ *ImpEdia*-ի ստեղծման մասին: Մահմեդականներին չի գոհացնում հանրահայտ ինտերնետ-հանրագիտարանում՝ Վիկիպեդիայում տեղ գտած տեղեկատվությունը մահմեդականության մասին, քանի որ որոշ հոդվածներ հակաիսլամական բնույթ են կրում: *ImpEdia*-ն կամավոր խմբագիրներ է փնտրում:

<http://www.utro.ru/news/2010/05/27/896823.shtml>

Նորույթ Ադրբեջանի «Delta Telekom»-ում

Ադրբեջանի «Delta Telekom» հեռահաղորդակցային օպերատորը ծրագրում է մինչև տարեվերջ երկրի համացանցային ռեսուրսների 90-95%-ը տեղադրել իր տվյալների կենտրոնում: «Delta Telekom»-ը Կովկասում ամենամեծ *Internet Backbone* ցանցի մատակարարն է, այն տրամադրվում է Ադրբեջանի բոլոր պրովայդերներին և Վրաստանի պրովայդերների 78%-ին: «Delta Telekom»-ի հաճախորդներն են Ներքին գործերի նախարարությունը, Ադրբեջանի միջազգային բանկը, Պետական մաքսային ծառայությունը, Պետական սահմանապահ ծառայությունը, Ֆինանսների նախարարությունը, Հարկերի նախարարությունը, Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիան և այլն:

<http://www.rt.ru/press/news/detail.php?ID=172117>

<http://day.az/news/hitech/210786.html>

Պայմանագիր Orbital Sciences Corporation ընկերության հետ

Ադրբեջանը պայմանագիր է ստորագրել *Orbital Sciences Corporation* ընկերության հետ Ադրբեջանի առաջին արբանյակի արտադրության վերաբերյալ: Մայիսի 27-ին Բաքվում ստորագրված պայմանագրի համաձայն, արբանյակը կարտադրվի ստորագրման օրվանից հետո՝ 26 ամսվա ընթացքում և տիեզերք կուղարկվի 2012թ. հուլիս-օգոստոսին: «AzerSpace» արբանյակի ծրագրի ընդհանուր արժեքը 163 մլն մանաթ է (մոտ \$200 մլն), որից 87 մլն-ը բուն արբանյակի արժեքն է, 16 մլն-ը՝ արբանյակի կառավարման հիմնական և պահեստային համակարգի 40 մլն-ը՝ տիեզերք ուղարկելու արժեքը: Շուտով Ադրբեջանը պայմանագիր կկնքի նաև այն ընկերության հետ, որը տիեզերք դուրս կրերի արբանյակը:

<http://1news.az/economy/tech/20100527044011707.html>

Google-ը պատրաստում է 3D տարբերակի Բաքվի համար

Google Earth նախագիծը հնարավորություն կտա 3D տարբերակով դիտել Բաքուն: Ինչպես հայտնում է *1news.az*-ը, այժմ արդեն Բաքվի որոշ օբյեկտներ, այդ թվում՝ կառավարության շենքը, Կենտրոնական բանկը և այլն, հնարավոր է տեսնել 3D տարբերակով:

<http://1news.az/economy/tech/20100531125221586.html>

Բազվել է Azeritube.az վիդեոպորտալը

Սպասվում է, որ ազգային վիդեոպորտալը մեծ տարածում կունենա *AzNET* տարածությունում: Հեղինակը «*Delta Telecom*» ընկերությունն է: «*Azeritube*»-ի միջոցով կհետարձակվեն նաև ադրբեջանական հեռուստա- և ռադիոծրագրերը:

http://www.aze.az/news_v_azerbayjane_zapushen_37694.html

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Թուրքիայի բանակի Գլխավոր շտաբի պետի հայտարարությունը

«Ռադիկալ» թերթը հաղորդում է, որ թուրքական բանակի Գլխավոր շտաբի պետ Իլքեր Բաշբուղը հանդես է եկել Հունաստանին հասցեագրված կոշտ հայտարարությամբ:

Անկարայում, պատասխանելով լրագրողների հարցերին, Բաշբուղը մասնավորապես նշել է, որ Թուրքիան հետագայում ևս պաշտպանելու է իր միջազգային իրավունքներն Էգեյան ծովի ավազանում. «Մենք երբեք չենք փորձել խնդիրներ, ճգնաժամային իրավիճակներ ստեղծել»:

Գեներալն ընդգծել է, որ թուրքական ռազմական ինքնաթիռները պարեկում են Էգեյան ծովի ջրավազանում՝ առանց մարտական զենքի, ինչը պահանջում է միջազգային իրավունքը, մինչդեռ նույնը չի կարելի ասել հունական կողմի մասին:

Հարցին, թե ինչպես է բանակը հանդուրժում վերջին ժամանակների քաղաքական ճնշումները, գեներալը պատասխանել է. «Ոչ մեկին չի հաջողվի սասանել Թուրքիայի զինված ուժերի միասնականությունն ու բարոյական ոգին»:

<http://turtsia.ru/rus/index/news?id=15354>

Թուրքիան սպառազինություններ գնող առաջատար երկրների շարքում է

Վկայակոչելով Ստոկհոլմի խաղաղության խնդիրների հետազոտությունների ինստիտուտի հաշվետվությունը՝ «Միլիտեր» թերթը գրում է, որ վերջին երկու տարիներին Թուրքիան արտասահմանյան երկրներից գնել է շուրջ 1.25 մլրդ դոլարի սպառազինություն: Ընդ որում, եթե 2008թ. Թուրքիան սպառազինություն ներմուծողների համաշխարհային ցուցակում 13-րդն էր (578 մլն դոլար), ապա 2009թ. արդեն գտնվում էր 10-րդ տեղում (675 մլրդ):

Ըստ սույն ինստիտուտի տվյալների՝ Թուրքիային զենք մատակարարող երկրների ցանկն այսպիսին է (*Տե՛ս Աղյուսակ 1*).

	2008	2009
Ֆրանսիա	8	8
Գերմանիա	299	185
Իսրայել	97	320
Իտալիա	26	5
Նիդեռլանդներ	13	13
Ռուսաստան	32	32
Հվ. Կորեա	73	73
Մեծ Բրիտանիա	15	15
ԱՄՆ	47	25

Միևնույն ժամանակ, 2008թ. Թուրքիան արտահանել է 43 մլն, 2009թ.՝ 36 մլն դոլարի զենք: Թուրքական զենքի հիմնական գնորդներն են եղել Վրաստանն ու Պակիստանը՝ համապատասխանաբար 14 և 12 մլն:

<http://turtsia.ru/rus/index/news/print?id=15171>

Կորեան ԱԷԿ կկառուցի Մինսկում

Վկայակոչելով «Անադոլու» լրատվական գործակալությանը՝ «Ջումհուրիեթ» թերթը հաղորդում է, որ սևծովյան Մինսկ քաղաքի մոտակայքում համատեղ ատոմային էլեկտրակայան կառուցելու մասին պայմանագիր է ստորագրվել Հվ. Կորեայի հետ:

Թուրք-կորեական գործարար ֆորումի համանախագահ, Թուրքիայի բնական ռեսուրսների և էներգետիկայի նախարար Թաներ Յըլդըզը լրագրողներին հայտնել է, որ կողմերը քննարկել են բազմակողմ համագործակցության հարցեր՝ տրանսպորտային ոլորտից մինչև բանկային հատված:

Նախարարը կարևորել է ԱԷԿ կառուցման վերաբերյալ համաձայնագրի ստորագրումը, որն ըստ նրա, մեծ ներդրում կլինի երկրի այլընտրանքային էներգաապահովման գործում: Յըլդըզը հիշեցրել է նաև, որ պետք է խորացնել Ռուսաստանի հետ համագործակցությունն այս ոլորտում:

Արձանագրության ստորագրումից հետո հատուկ ստեղծված աշխատանքային խումբը պետք է պատրաստի և համաձայնեցնի ԱԷԿ կառուցման

պայմանագրի վերջնական տեսքը, ինչպես նաև ատոմակայանի արտադրելիք էլեկտրաէներգիայի գինը: Նախարարը շեշտել է, որ 2020թ. Թուրքիան պետք է առնվազն 10 ատոմակայան ունենա:

<http://www.cumhuriyet.com.tr/?hn=121042>

Թուրքական սահմանը կհսկեն ռոբոտները

«Ջումհուրիեթ» թերթը, վկայակոչելով «Անադոլու» լրատվական գործակալությունը, նշում է, որ կենդանի ուժի կորստի նվազեցման նպատակով նախատեսվում է մոտ ապագայում Թուրքիայի պետական սահմաններին տեղադրել հեռակառավարման համակարգով գործող ավտոմատ կրակային դիտակետեր:

Ավտոմատացված դիտակետերի առաջին խմբաքանակը, որն արտադրվում է «Յուքսել պաշտպանական համակարգեր» կազմակերպության կողմից, արդեն պատրաստ է ուղարկվելու սահմանապահ ուղեկալներ: Կազմակերպության ներկայացուցիչները լրագրողների հետ հանդիպման ժամանակ տեղեկացրել են, որ հսկողություն սահմանող կրակային նոր համակարգի դաշտային փորձարկումը բարեհաջող է անցել՝ ցուցադրելով հարյուր տոկոսանոց արդյունք:

Համակարգի ստեղծման վրա աշխատած մասնագետների խոսքերով՝ բոլոր եղանակների համար նախատեսված ռոբոտ սարքավորումը հագեցած է 500 փամփուշտով, ջերմային և էլեկտրաօպտիկական տեսախցիկներով, թիրախի հեռավորությունը որոշող լազերային սարքավորմամբ:

Ենթադրվում է, որ ռոբոտ սարքավորումները պետք է օգտագործվեն սահմանապահ ուղեկալներում, ինչպես նաև այն շրջանների զորանոցների պաշտպանության համար, որտեղ ահաբեկիչներ են գործում:

<http://www.cumhuriyet.com.tr/?hn=122136>

«ԳԼՈԲՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԿ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 09.07.2010թ.
Թիվ 4 (14), 2010թ.
Տպաքանակը՝ 200:

Ֆորմատը՝ 70x100 1/16: Պայմանական 3 մամուլ:
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում